

Ռոմիկ Խ. Քոչարյան
Փիլիս. գիյ. թեկնածու,
Անահիտ Ռ. Ջիջյան
Փիլիս. գիյ. թեկնածու

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ՝ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՅԻ*

Բանալի բառեր – սոցիալական, սոցիալական գիտություն, սոցիալականորեն նշանակալի, օբյեկտ, կարիք, իսկություն:

Մուտք

Համաշխարհի (ունիվերսումի) ճանաչողության և քննախորհրդածությամբ ճշտիմացության խնդրակարգում կենտրոնական ու առանցքային հիմնախնդիր է ամենայն գոյի որպես այդպիսին գոյության հարցադրությունն ու իմացահայտումը:

Մարդկային մտքի ու հենց իմաստասիրության պատմությունում «գոյի գոյությունը» հարցադրվել է հիմնականում իր բաղադրատարրերով՝ «գոյի» ինչ և «գոյության» ինչպե՞ս լինելը, այդպե՞րպ՝ հարցավորումն իրագործելով մաս առ մաս ու միմյանցից մեկուսի և հստակ չորոշարկելով այդ բաղադրատարրերի փոխզանազանությունն ու նաև փոխառնչվածությունը: Այն հարցադրվել է նաև միասնականորեն՝ «գոյի գոյության» ինչպիսի՞ն լինելը, թեև ոչ երբևէ բուն հիմնախնդրի սկզբունքային միասնության նկատառությամբ և ուրեմն ուսումնասիրության ընթացքում մասնաբաժան հարցմամբ, իսկ այնուհետև քննախոհությամբ այդ իսկ միասնությանը հասու դառնալու խորհրդիմացությամբ: Ի համեմատ այդպե՞րպ թերի ըմբռնման՝ աստ հարցադրվում է ո՞չ սոսկ «սոցիալական գիտության» ինչ լինելը և ո՞չ էլ սոսկ նրա «գոյության» ինչպես լինելը՝ երկուստեք իրագործելով մասնակի քննախոհություն, այլ՝ առաջադրվում է իր «ինչ» ու «ինչպես» բաղադրատարրերի փոխազդու ներկապակցվածությամբ ամբողջական՝ «սոցիալական գիտության գոյության» հիմնախնդիրը, այդպե՞րպ՝ վերըմբռնելով այն որպես սկզբունքորեն բազմաբովանդակ ու մեկ-միասնական հարցադրություն:

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 3 (63), հայխա-սեպտեմբեր, 2018
ՎԷՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.07.2018:

1. «Սոցիալական գիտության գոյության» ուսումնասիրության մեթոդաբանությունը

Էական է նաև ամրագրել, որ այդ հարցադրությամբ որոնումի խնդրակարգը և ուղին հնարավոր ու նախընտրելի է կազմակերպել՝ խորհրդածությունն ուղղորդելով ըստ «**իսկության հերմենևտիկայի**»¹ ու նրա հետևողական ներկատարելագործմամբ՝ հենց «**իմաստության հերմենևտիկայի**» հայեցակարգի ու մեթոդաբանության², բացորոշելով սոցիալական գիտության իսկական ու անիսկական գոյությունը:

Ամենայն կամ որևիցե մասնավոր գոյի և այդ թվում նաև ամենայն գիտությունների ու կոնկրետորեն՝ «սոցիալական գիտության գոյության» որպիսությունն ուսումնասիրել՝ կնշանակի հարցադրել և քննախորհրդածությամբ հասկանալ ու մեկնորոշել դրանց՝ որպես այդպիսին, գոյության իսկությունը: Մարդկային ինքնությունն ու կեցողությունն աշխարհում՝ որպես այդպիսին, իր իսկ բնության յուրահատկությամբ կայացնող, էացնող է հասկացման ու մեկնորոշման ձգտումն ու ջանքը, որոնց բուն կոչումն ու սկզբունքորեն ուղղորդվածությունն է՝ բացահայտել **իսկությունը**³: Ամենայն գիտություն սկզբունքորեն քննում է իրապես գոյություն ունեցողը և բացահայտում գոյի գոյության ճշմարտությունը, նույնն է թե ասել՝ իսկությունը:

Հարկ է ամրագրել մտքի ունիվերսալ մի բանաձև, ըստ որի՝ **գիտական գիտելիքը իսկություն հայտող միտքն է**: Ընդ որում, «իսկությունը» կարելի է հասկանալ ու մեկնորոշել զանազանակերպ: Որպես «իրի», «գործի» կամ հենց «սոցիալական գիտության» իսկություն կարող է նախնականորեն հասկացվել նույնիսկ դրանց **իրական ու կոնկրետ գոյության որպիսության դեռ միմիայն նկարագրությունը**, որով և իրենք ներկայում են այս կյանքում, և այդ դեպքում գիտելիք է ներկայանում իսկություն հայտող այն միտքը, որում և մտածվում է դեռ միայն տեսանելին կամ զգայելին և հենց այդպես ու այդչափ նկարագրելի դրանց որպիսությունը: Եվ, անշուշտ, որպես որևէ «իրի», «գործի» կամ հենց «սոցիալական գիտության» իսկություն կարող է հասկացվել դրանց իրական ու կոնկրետ գոյության որպիսության՝ նաև **պատճառիմաց բացահայտությունը**: Իսկ որևէ իրի, գործի որպիսության՝ պատճառով հանդերձ, իսկության բացահայտություն ներ-

1 Այս առնչությամբ նշենք, որ այս հոդվածի համահեղինակ՝ Ռ. Քոչարյանի «Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան» մենագրությունում առաջին անգամ որպես «իսկության հերմենևտիկա» է բնորոշվել Հ.-Գ. Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկայի հայեցակարգը, որում և մեկնողաբար բացորոշմամբ ներկայացվել է, որ նրա «իսկություն և մեթոդ» ծրագրային երկում ու հերմենևտիկայի վերաբերյալ նաև այլ ուսումնասիրություններում իրագործվում է «իսկության հերմենևտիկայի» իդեայի ժամանակակից ըմբռումը, և առաջադրվում է թեև ոչ լիովին, այնուամենայնիվ, նշանակալի չափով ամբողջական մի տեսություն, որը և իր լրումի ուղղությամբ էական առաջընթաց է ունեցել Պ. Ռիկորի հերմենևտիկայի հայեցակարգում:

2 Սույն հոդվածի համահեղինակի կողմից՝ «իսկության հերմենևտիկայի» հետևողական զարգացմամբ առաջադրված այս նոր հայեցակարգի վերաբերյալ մանրամասն տես **Քոչարյան Ռ.**, «Իմաստության հերմենևտիկան» ամենայն գիտության և փիլիսոփայության հիմնորոշ ու համընդհանուր մեթոդաբանական հայեցակարգ, «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ», միջազգային գիտաժողով, ԵՊՀ հրատ., Եր., 2014, էջ 18-21, տես նաև **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինգտոն», Եր., 2016, էջ 161-186:

3 «Իսկություն» հասկացության մասին մանրամասն տես **Քոչարյան Ռ.**, Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, ԳԱԹ՝ հրատարակչություն, Եր., 2006, էջ 28, ծանոթ.16a:

կայացող գիտական գիտելիքը այնպիսի միտք է, որում արդեն մտածվում է զգայական աչքը անտեսանելին՝ իսկություն հայտող իմաստը և նույնիսկ առավել խորքային՝ իմաստության խորհուրդը:

Իսկության բազմաբովանդակության այսկերպ փոքր-ինչ մեկնորոշման հետ մեկտեղ հարկ է նաև ամրագրել, որ որևիցե գոյի կամ գործի որպիսությունը բացահայտել կնշանակի բացահայտել նշանակություններ կամ իմաստներ: Ամենայն գիտություն ու նաև սոցիալական գիտությունը, տեսական իր գործառնությունը իրագործելով իր նպատակը՝ իսկության բացահայտումը, ըստ էության, գործ է ունենում իմաստի եռակի հնարավորության հետ: Եվ ամենայն գոյի կամ իրողությունների որպիսության առնչությամբ բացահայտվող իմաստը կարող է լինել եռակի հնարավորությամբ՝ թերիմաստ, թյուրիմաստ և, վերջապես, ճշմարիտ իմաստ, ասել է թե՛ **բուն իսկությունը հայտող իմաստ**, որի հետ և գործ ունի գիտական հետազոտությունն ու գիտությունը:

«Խնդրո նյութի ու բանի» վերաբերյալ մտորումները շարունակելով՝ հարկ է նաև ամրագրել, որ մարդկային կյանքի ամենայն «փրաց և գործոց» ճշտիմացության համար էական է քննախորհրդածությամբ հարցադրել, հասկանալ ու մեկնորոշել ամենայնի՝ որպես այդպիսին, գոյության իսկությունը հայտող իմաստը և այդ իմաստում պահյալ իմաստության խորհուրդը: Ահավասիկ, գիտական գիտելիքի վերոբերյալ բանաձևը կարելի է ներկայացնել առավել մանրակերտ ու հենց նպատակահասու բացորոշմամբ. **գիտական գիտելիքը իսկություն հայտող խորհրդիմաց միտքն է**, կամ ավելի կարճ՝ **գիտական գիտելիքը իսկություն հայտող խորհրդիմացությունն է**: Եվ, իհարկե, իմաստության խորհուրդի գիտեցումը կամ խորհրդիմացությունը նշանակետն է ոչ միայն գիտական գիտելիքի, այլև ամբողջական գիտության: **Գիտության կոչումը և ըստ այդմ՝ դիտավորությունը, կերպարանումն ու կատարումն է՝ խորհրդածությամբ հասկանալ ու մեկնորոշել ամենայն գոյի որպես այդպիսին գոյության իսկությունը հայտող իմաստը և այդ իմաստում պահյալ իմաստության խորհուրդը**:

Արդարև, ճանաչել կամ հասկանալ որևիցե իրողություն կնշանակի հասու լինել դրա իսկությունը հայտորոշող իմաստին ու այդ իմաստում պահյալ իմաստության խորհուրդին և այդկերպ՝ կատարելագործվել ու կայանալ որպես հենց իմաստության գիտելիք: **Գիտությունն այնժամ, այնկերպ ու այնչափ է ճշմարտությամբ գիտություն, երբ սկզբունքորեն դիտավորություն ու կատարում ունի՝ հասկանալ ու բացահայտել իմաստություն, այդկերպ՝ ինքնահասկանալով, կատարելագործվելով ու կայանալով որպես աստվածային ու մարդկային իրողությունների և-կամ ամենայն գոյի գոյության որևէ մասնավոր ոլորտի իսկությունը հայտող իմաստի, որում և՛ իմաստության գիտություն:** Քանզի իր իսկությունն իրենում ունեցող և ուրեմն՝ իսկական ու կատարելության ձգտող գիտությունը հենց իմաստության գիտությունն է⁴: Եվ եթե գիտությունն ու մասնա-

4 Սոցիալական աշխատանքի որպես գիտության ու արվեստի և հենց որպես պրակտիկ իմաստության մասին տեն **Ջիջան Ա.**, «Հոգածությունը» որպես ունիվերսալ ինտենցիա ու հիմք սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի փոխհաղորդակցության, «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գիտաժողովի նյութեր, գիրք IV, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, «Լիմուշ», Եր., 2014, էջ 139,

վորապես սոցիալական գիտությունը հետամուտ չէ իմաստության ու հենց իմաստության գիտություն չէ, ապա՝ չգիտի և որևէ ինչ ու չգիտի իսկություն և այն ամենը, ինչը կարծում ու հավակնում է, թե՛ գիտի, սխալ գիտի: Արդարև, եթե գիտությունն ու մասնավորապես՝ սոցիալական գիտությունը չգիտի իսկություն ու իմաստություն, չգիտի և ոչինչ, և այն, ինչը կարծում է, թե՛ գիտի, չգիտի այնպես, ինչպես **պիտո** էր գիտենալ:

Արդ վերոասացյալը սոցիալական գիտության առնչությամբ կոնկրետացումով միաբերելով՝ էական է քննախորհրդածությամբ հարցադրել, հասկանալ ու մեկնողաբար բացորոշել սոցիալական գիտության որպես այդպիսին գոյության իսկությունը հայտող իմաստը, որում և պահյալ՝ իմաստության խորհուրդը: Եվ կարելի է ամրագրել, որ **սոցիալական գիտության իսկությունը հայտող խորհրդիմացությունը այնպիսի գիտելիք է, որում մտածվում է ոչ թե սոսկ տեսանելին կամ զգայելին, այլ արդեն նաև սկզբունքորեն անտեսանելին ու հենց վերզգայականը և միմիայն մտքին մատչելի կամ մտահասու և-կամ մտոք հասկանալի իմաստության խորհուրդը:**

Ընդ որում, ինչպես ըստ Մ. Հայդեգերի՝ մարդու գոյությունը, այնպես և ամենայն գիտությունը և արդ՝ կոնկրետորեն սոցիալական գիտությունը ևս հարկ է հարցադրել ու իմացահայտել ոչ սոսկ որպես գոյող (օնտիկ) կամ գոյաբանող (օնտոլոգիական), այլ՝ երկմիասնական ու ամբողջական գոյող-գոյաբանող (օնտիկ-օնտոլոգիական) իր գոյության մեջ: Եվ աստ՝ ամենայն գիտության ու կոնկրետորեն՝ սոցիալական գիտության պարագայում ևս լրիվ ու ամբողջական կարող է լինել **գոյութենական** հարցադրումն ու իմացահայտումը:

Ըստ Մ. Հայդեգերի՝ «մարդ» գոյավորի գոյությունն էսպես զանազանվում է աշխարհում գոյությունն ունեցող և աշխարհ-ամբողջությունը բաղկացնող այլ գոյավորների գոյության մոդուսից: Մարդու գոյությունը, ըստ էության, աշխարհում յուրովի ներկայող և իր այդ յուրահարուկ ներկայությամբ՝ համայն աշխարհին իր բոլոր գոյերով հանդերձ իր նկատմամբ ներկայավորող գոյի գոյություն է: Ամենայնի գոյությունում, ի համեմատ այլ գոյերի գոյության, մարդու գոյությունը էակից է ամենայնի գոյությանն ու բուն էությանը ու այդպես՝ ամենայնի գոյությունն իր նկատմամբ էակցող ու հենց ներկայավորող է՝ ամենայնի գոյության անթաքչությունը՝ որպես իսկություն, հայրող ու հենց իմաստավորող է: Եվ այս աշխարհում միմիայն մարդու գոյությունն է ամենայնի գոյությունն էակցող ու ներկայավորող՝ իսկություն հայրող ու իմաստավորող: «Նրա [մարդու] գոյությամբ և նրա միջոցով գոյությունը նրան բացված է»⁵: Արդ՝ մարդու գոյությունն այս աշխարհում ներմուծում է ներկայող գոյության մոդուս կամ ավելի ձգգրիպ՝ մարդու գոյությունն իրենով այս աշխարհի գոյությանը օժտում է ներկայող հնարավորությունն ու հենց իրագործում այն: Այս աշխարհում մարդու գոյության ու հենց «ներկայության գոյական (օնտիկ) առանձնահատկությունն այն է, որ այն գոյում է գոյաբանորեն (ընդգծումները մերն են - Ռ. Ք.)»⁶: Ըստ Մ. Հայդեգերի

Զիջյան Ա., Քոչարյան Ռ., Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը», «ԴԱԼԼ», Եր., 2009, էջ 37, 91-93, 147, տե՛ս նաև **England H.**, Social work as art, London, Allen & Unwin, 1986, p. 73-101, **Patricia L. Samson**, Practice wisdom: the art and science of social work, Journal of social work practice, vol. 29, 2015, p. 119-131:

5 Хайдеггер М., Бытие и время, Изд. "AD Marginem", М., 1997, с. 12.

6 Նույն տեղում:

բնորոշման՝ մարդու գոյությունն աշխարհում սկզբունքորեն ներկայանում է որպես «հասկացող» ներկայություն կամ կեցողություն (Dasein)⁷: Եվ ինչպես Մ. Հայդեգերն է իմացահայտում, մարդը սուկ գոյող չէ և մարդկային գոյությունը սուկ գոյական (օնփիկ) հարթությունում չէ, ինչպես բնաշխարհի ամենայն այլ գոյավոր, այլ այնպիսին է, որ գոյության մասին հարցադրում ու իմաստ է բացահայտում և ուրեմն այն նաև գոյաբանող (օնփոլոգիական) է: Ահավասիկ, մարդու գոյությունը երկմասնաբար գոյող-գոյաբանող է (օնփիկ-օնփոլոգիական) է, և մասնակի ու սրոյգ չի լինի այն հարցադրել ու իմացահայտել սուկ գոյող կամ գոյաբանող լինելության մեջ, այլ հենց այդ երկուսն իրենում միասնացնող գոյությունում: Արդ՝ մարդու պարագայում լրիվ ու ամբողջական կարող է լինել **գոյութենական** հարցադրումն ու իմացահայտումը: Եվ կարելի է ասացալից նաև եզրակացնել, որ մարդու պարագայում գոյութենական հարցադրության, իսկության իմացահայտմանն ու իմաստավորմանն այս առանձնահատկությունը փոխանցվում է նաև ամենայն գիտության գոյության պարագային: Մարդու գոյության հետ մեկտեղ՝ նայնորեն և գիտությունների գոյությունն ու կոնկրետորեն՝ սոցիալական գիտության գոյությունն է գոյող (օնփիկ) ու գոյաբանող (օնփոլոգիական):

«Ամենայն գոյի գոյության» և կոնկրետորեն «սոցիալական գիտության գոյության» ուսումնասիրության սկզբունքային խնդրակարգի լուծումը, այսինքն՝ իսկությունը հայտող իմաստի, որում և իմաստության խորհուրդի, հասկացումն ու մեկնողաբար բացորոշումը ինչ ուղենշմամբ և բաղադրատարր խնդիրների ինչպիսի կարգավորությամբ է իրագործելի դառնում: Հարցերի ինչպիսի ընթացակարգով կամ ինչ խնդրակարգով է անհրաժեշտ ու նախընտրելի կազմակերպել ամենայն կամ որևոր մասնավոր գոյի, իրողությունների որպիսության ուսումնասիրությունը:

Ինչպես և նշում է Դավիթ Անհաղթը, ուսյալ հին հույն իմաստասերներից, գրեթե ամենայն իրողությունների առնչությամբ ընդունված է մասնաբաժանորեն քննախորհրդածությունն իրագործել չորս հարցադրությամբ՝ «գոյություն ունի՞ արդյոք», «ի՞նչ է», «ինչպիսի՞նչ ինչ է», «ինչի՞ համար է»⁸: Ահավասիկ, Դավիթ Անհաղթից ուսյալ համախոհությամբ՝ իմաստասիրության կամ որևիցե այլ գիտության և աստ՝ նաև հենց սոցիալական գիտության վերաբերյալ քննության ենթակա առաջիկա հարցերը վերոնշյալ չորսն են՝ ա) «գոյություն ունի, արդյո՞ք, սոցիալական գիտությունը», բ) «ի՞նչ է» և գ) «ինչպիսի՞նչ ինչ է սոցիալական գիտությունը», կամ որ նույնն է՝ «որպես ի՞նչ գոյություն ունի սոցիալական գիտությունը», դ) «ինչի՞ համար է սոցիալական գիտությունը»: Նշված չորս հարցադրումներով ամբողջացող նպատակային խնդրակարգի համաձայն իրագործելով ուսումնասիրությունը, բացահայտելի է դառնում սոցիալական գիտության **բնությունը**, այսինքն՝ սոցիալական գիտության որպիսությունը՝ **որպես այդպիսին գոյության իսկությունը**: Իսկ բացահայտել սոցիալական գիտության իսկությունը հայտող իմաստը, կնշանակի՝ բացահայտել նրա գոյության հենց **սեփական իմաստը**:

7 Մ. Հայդեգերի «Dasein» հասկացությունը ճշգրիտ կերպով որպես «ներկայություն» թարգմանելուց բացի իմաստ ունի օգտագործել և մեր գիտական աշխատություններում կիրարկվում է նաև «կեցողություն» առավել չեզոք և մարդու գոյության մոդուսի տարբեր կերպափոխությունները արտահայտելու տեսակետից իր գործածելիության մեջ ընդհանրական հասկացությունը (տես **Քոչարյան Ռ.**, Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, «ԳԱՄ», Եր., 2006, էջ 65):

8 **Դավիթ Անհաղթ**, Սահմանք իմաստասիրութեան, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», Եր., 1980, աշխատասիրութեամբ Ս. Արևշատյանի, էջ 29:

Եվ, անշուշտ, բոլոր այս հարցերն իրենց ներքին հիմնորոշ ու միասնող ներկարգավոր առնչվածությունն ունեն «սոցիալական գիտության գոյության» վերաբերյալ ներքուստ բազմաբովանդակ ու հենց մեկ-միասնական հարցին: Այսկերպ հոլովակի հարցման մեջ հարցվողը «սոցիալական գիտություն», աստ՝ կոնկրետորեն՝ «սոցիալական իմաստասիրություն» և «սոցիոլոգիա» գոյավորն է՝ իրեն հատուկ գոյության կերպի մեջ: Եվ այդ կնշանակի, ուսումնասիրության ենթակա է ոչ միայն մասնաբաժան քննախոհությանը տվյալ գոյավորի ինչ ու ինչպիսի ինչ լինելը հարցադրելն ու իսկությունը բացորոշելը, այլև ամբողջականացնող քննախոհության ու արդեն ամբողջական իսկության բացահայտման համար հիմնորոշ մեկ այլ հարց ևս, թե՛ ինչպիսին է գոյությունը՝ պոտենցիան և իրագործվածությունը, քննառվող գոյավորի, կամ՝ ինչպիսին է գոյության այն մոդուլը, որ և սկզբունքորեն հատուկ է մտաքննվող գոյավորին, և իր կոչմանը համապատասխան ու սկզբունքորեն սեփական գոյության իսկությամբ, թե՛ անիսկությամբ է այդ գոյավորի գոյությունն իրագործվել այս կյանքի իրականությունում: Աստ՝ քննա-խորհրդածության «խնդրո նյութ» ունենալով կոնկրետորեն՝ «սոցիալական գիտության գոյությունը», իսկ որպես «խնդրո բան»՝ հետամուտ լինելով «սոցիալական գիտության իսկությունը հայտող խորհրդիմացության», վերոնշյալ չորս հարցերը լրացնող այդ հարցադրումը կոնկրետանում է հետևյալ բանաձևմամբ, առաջին՝ ինչպիսին է գոյության այն մոդուլը, որ և սկզբունքորեն հատուկ է սոցիալական գիտությանը և երկրորդ՝ իր կոչմանը համապատասխան ու սկզբունքորեն սեփական գոյության իսկությամբ, թե՛ անիսկությամբ է սոցիալական գիտության գոյությունն իրագործվել այս կյանքի իրականությունում:

2. Սոցիալական գիտության գոյության հիմնավորումն ու օբյեկտիվությունը

Արդ՝ քննության ենթակա նախնական ու առանցքային հարցադրում է ձևակերպվում հետևյալը. **«գոյություն ունի, արդյոք, սոցիալական գիտությունը»:** Հիրավի, առավել քան տարօրինակ կարող է թվալ այն հարցը, թե՛ գոյություն ունի, արդյոք, սոցիալական գիտությունը, աստ՝ կոնկրետորեն թե՛ սոցիալական իմաստասիրությունը և թե՛ սոցիոլոգիան: Չէ՞ որ մոտ մեկուկես հարյուրամյակ մարդկության կյանքում իր հենց այդ անվանումով գոյություն ունի «սոցիոլոգիան» և ուրեմն նրա գոյության մասին հարցն առնվազն ավելորդ կարելի է համարել:

*Սոցիոլոգիան՝ որպես առանձին գիտություն, ինչպես հայրնի է, հիմնադրվել է 19-րդ դարում, սակայն մարդկության կյանքի հազարամյակների ընթացքում մշտապես ուսումնասիրողների հետաքրքրության ոլորտում են գտնվել սոցիալական իրողությունները որպես այդպիսին և դրանց գոյության փարաբնական դրսևորումները մարդկային կյանքում: Եվ սոցիոլոգիայի նախապայմանությունը նկատել է փայլիս, որ սոցիալական հետազոտություններն ու սոցիալական հայացքները հնուց ի վեր մարդկանց համարել կյանքում սկզբունքային իրենց **կարիքի** առումով մշտապես ունեցել են ակտիվություն: Սոցիոլոգիայի հայրնի փեսաբանների անկեղծ խոսքով անտյանքայնաբ ժամանակակից փեսական սոցիոլոգիան հիմնվում է սոցիալական խնդրակար-*

գի ուսումնասիրության մարդկության իմաստասիրական մտքի նախկին փորձառության, այն է՝ փիլիսոփայական ամբողջական հայեցակարգերում անկապելիտորեն ներկա սոցիալական ուսմունքների անցյալի ավանդության վրա⁹: Այս առումով սոցիոլոգիայի առաջացման նախահիմքերը Եվրոպայում կարելի է նկատել դեռ անարիկ շրջանում՝ հին հոյակերի յոթ իմաստունների¹⁰ գործնական փիլիսոփայությունում՝ **մարդկային ինքնության ու կենցաղավարության, առաքինի կենսակերպի ու այլոց հետ բարեկարգ համակեցության** խնդիրների վերաբերյալ սոցիալ-իմաստասիրական տեսակետներում և ըստ այդմ՝ նրանց արեղծած օրենսդրություններում: Սոցիոլոգիայի նախահիմք ու նախապարմություն են ներկայանում նաև Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, հին հունական և հռոմեական փիլիսոփայական դպրոցների սոցիալական հայեցակարգերը, վաղ և ուշ միջին դարերի սուրբ հայրերի ամբողջական վարդապետության մաս կազմող քրիստոնեական կենսակերպի իմաստությունը, Վերածննդի, Ռեֆորմացիայի, Նոր Ժամանակների և Լուսավորության ժամանակաշրջանի և, անշուշտ, նաև ուրոպիսպ մրաժողների (Թոմաս Մոր, Թոմազո Կամպանելլա, Շառլ Ծոպյե, Ռոբերտ Օսեն, Անրի Սեն-Սիմոն,...¹¹) սոցիալական-փիլիսոփայական հայացքները:

Փիլիսոփայական հայեցակարգերում բովանդակյալ սոցիալական հայացքների և-կամ ամբողջական ուսմունքների համար ընդհանուր է այն, որ դրանք, որպես իրենց կազմակերպող հիմնորոշ սկզբունք, ասել է թե՛ սկզբունքային հիմք, առանցք, միավորող կաղապար ու կառուցվածք, ունենին **գրանցենդենուրալ իդեաներ** և, ըստ էության, հանդես էին գալիս այդ իդեաների որպես այդպիսին գոյության և մարդկային կյանքում այս կամ այն կերպ առանձնահատկությամբ իրագործված ներկայության իսկությունը բացորոշող **մեպաֆիզիկական հայեցակարգեր** և-կամ հայեցակարգ-ամբողջի մաս կազմող բաղադրիչներ:

Սոցիալական իմաստասիրությունը և ապա նաև սոցիոլոգիայի ժամանակակից գիտակարգը վաղուց ի վեր դարձել են մարդկային կյանքի եղելություններ, ուստի ինչպե՞ս հասկանալ սոցիալական գիտության գոյության վերաբերյալ հարցադրումը: Եվ պատասխանը նախնականորեն այն է, որ իրենց դեռ միայն սկզբունքորեն գոյության և ապա՝ ի՞նչ, ինչպիսի՞նչ ինչ, ինչի՞ համար ու ինչպե՞ս գոյության մասին ամբողջական հարցադրումն էական է գիտությունների և աստ՝ սոցիալական գիտության՝ ինքն իրեն անդրադարձող ռեֆլեքսիայի, իմա՝ **ինքնահասկացման** համար: Սոցիալական գիտությունը, նախ և առաջ, **միտք** ու հենց **գիտելիք** է և հարկ է, որ կայանա որպես այդպիսին: Մարդկային ամենայն մտածումները չէ, որ ներկայանում են որպես միտք: Եվ ամենայն գիտելիք չէ, որ կայացել է որպես **գիտական գիտելիք**, այսինքն՝ սկզբունքորեն **պատճառիմաց գիտելիք**, որ և գիտի իրողությունը ստուգությամբ, այլ կարող է լինել նաև **կարծիք**, որը թեկուզ և կարողունակ պատճառիմացության և-կամ չիմացության, այնուամենայնիվ, գիտի անստույգ, թերությամբ կամ թյուրությամբ: Միտքը սկզբունքորեն որպես այդպիսին՝ քննում է **գոյի գոյությունը**, ինչպես և նշում է Դավիթ Ան-

9 Տե՛ս **Мертон Р.**, Социальная теория и социальная структура, М., 2006, էջ 8:

10 Հին Հունաստանում, ըստ ավանդության, յոթ իմաստուններ էին համարվում Թալեսը, Սուրը, Բիանը, Կլեոբոլոսը, Քիլոնը, Պիտոակը, և Էպիմենիդը:

11 Այս առնչությամբ էական է հիշատակել, որ Յու. Դավիդովը սոցիոլոգիայի պատմության և ուղղակիորեն հենց առաջացման վերաբերյալ իր շարադրանքը սկսում է Սեն-Սիմոնի հայեցակարգի ներկայացմամբ: Տե՛ս **Давыдов Ю. Н.**, История теоретической социологии, в 4-х томах, т.1, М., 2002, էջ 25, 28-63:

հաղթը: **Մտքի բուն կոչումն է՝ մտածել գոյի գոյությունը և բացահայտել իսկությունը, որ և այն իրագործում է՝ կայանալով որպես բանական արվեստ ու գիտություն և կոնկրետորեն՝ նաև հենց սոցիալական գիտություն:**

Սակայն մարդկության կյանքում մտքով ու հոգով ստեղծված ոչ ամենայն է իրական: Գիտությունը միտք է, ստեղծված է հենց մտքով, «մակամտածական» է (Դավիթ Անհաղթի հասկացությունն է)՝ մտքից է մակածված, և սակայն, նրա գոյությունն իրական է: Զգացմունքը ստեղծված է հոգով և նույնպես իրականորեն գոյություն ունի: Դրա հետ մեկտեղ կան նաև մարդկային բանական հոգով ու մտքով ստեղծված և, սակայն, գոյություն չունեցող, առասպելական կամ դիցաբանական հորինվածքներ՝ զուտ մտացածին ու պատրանքային: Օրինակ՝ արալեզր, հավերժահարսերը, կենտավրոսը և այլն:

Արդ՝ սոցիալական գիտությունը, ուսումնասիրելով գոյություն ունեցողը՝ մարդկային կյանքի նշանակալի իրողությունները, հենց միտք է և հանր է լինի միտք, այլ ոչ թե այնպիսի մտածում, որ նշում է մտացածին ու հորինված անգոյը (օրինակ՝ արալեզր, կենտավրոսը, հավերժահարսը, ջրահարսը, էլֆերը...) և-կամ անհատուկը՝ անիրական հատկությունը, պատրանքայինն ու ստահնարը: Սոցիալական գիտությունը նաև հենց պատճառիմաց գիտական գիտելիք է, որ և որպես միտք՝ մտածում է մարդկային կյանքի իրողությունները և բացահայտելով որպիսությունը, ստույգ ու չափավորությամբ գիտի ու հայտորոշում է իսկությունը, ըստ մարդկային կարողության: Ահավասիկ, սոցիալական գիտությունը գոյություն ունի՝ ներկայանալով հենց որպես մարդկային իրական կյանքի իսկություն հայտող միտք ու գիտելիք և ոչ պատրանք՝ մտացածին ու ստապատում հորինվածք:

Սակայն արդյոք սոցիալական գիտությունը **իրական կյանքում**՝ իր նախկին ու նաև ժամանակակից ամենայն հայեցակարգերում, ներկայանում է որպես միտք ու գիտելիք՝ իրենց բնության այդպերպ որոշարկմամբ, թե՛ երբեմն ու նույնիսկ հաճախ ինքնահայտել է իրեն որպես գիտականակերպ կարծիք, կամայածին ու անձնահաճ թեր- ու նաև թյուր-հասկացում: Մարդկության նախկին և ժամանակակից կյանքում սոցիալական գիտությունը իր տարատեսակ հայեցակարգերում ու հետազոտություններում բազմիցս կայացել է, հետազոտողի անկեղծ խոստովանությամբ կամ գուցե կեղծությամբ և դրանցում երբեմն կամա թե ակամա ինքնահաճությամբ ու ոչ-ձշմարիտ կանխադատությամբ, որպես **եղելությունների այս կամ այն կերպ կապակցում**, որում «իբր իսկություն» և «իբր հասկացման արժանի իմաստ ու իմաստություն»՝ ընկալված ու ներկայացվել են գուցե և հնարավոր բարին ու նախընտրելին կամ անորոշը կամ անբարին ու մերժելին և երբեմն ու նույնիսկ հաճախ՝ **ամենայն դրանցում ետակենտրոն կամ խմբակենտրոն՝ քաղաքականորեն, տնտեսականորեն, մշակութային և-կամ այլակերպ կարծեցյալ «շահ»եկան մտացածինն ու պատրանքայինը:**

Արդ պատասխանելով առաջնային ու հենց առաջին հարցին, թե «գոյություն ունի՞ արդյոք սոցիալական գիտությունը», հարկ է պատասխանել, որ այն գոյություն ունի և իր գոյության համար ունի իրական, այսինքն՝

նույնորեն գոյություն ունեցող հիմքեր: Ո՞րն է այդ հիմքը. սոցիալական գիտության գոյության համար իրականորեն գոյություն ունեցող հիմքը հենց այն առարկայական տիրույթն է կամ առարկան (օբյեկտն) է, որի վերաբերյալ տեսագործնական գործառնության՝ ուսումնասիրության ու բարեկարգման է կոչված այդ գիտությունը: Սոցիալական գիտության որպես այդպիսին գոյության համար առարկայի (օբյեկտի) կամ առարկայական տիրույթի (օբյեկտային տիրույթի) **հիմնարար** լինելը և ուրեմն ուրույն հենքի առկայությունը որպես անհրաժեշտ գոյապայման հասկանալը հնարավորություն է ընձեռում իր ամբողջական խնդրակարգում, տեսական ու գործնական իր պրակտիկաների ամենայն բաղադրատարրերում խուսափել կամ ձերբազատվել ինքնականության այլևայլ դրսևորումներից՝ գանազան ու բազմաթիվ թերի և թյուր, թվացյալ ու կարծեցյալ ըմբռնումներից, կանխադատություններից, սուբյեկտիվ կամայականություններից: Եվ «սոցիալական գիտության գոյության» ամբողջական խնդրակարգում առաջնահերթորեն հարց տալով նրա գոյության մասին, արդյունքում բացահայտվում են այն հիմքերը, որոնք և անհրաժեշտորեն ու օբյեկտիվորեն գոյության են կոչում, սկզբունքորեն հնարավորում ու ապահովում ընդհանրապես, «սոցիալական գիտությունը որպես այդպիսին» ու, մասնավորապես, հենց տվյալ որոշակիորեն կոնկրետ մոդուլը: Առաջին հարցը սոցիալական գիտության որպես այդպիսին գոյության իսկության բացահայտման համար ունի ելակետային նշանակություն և իսկության դուռ բացող բանալի ու **սեփական իմաստ** բացահայտող քննության ու խորհրդածության սկիզբ է:

Ասվեց, որ սոցիալական գիտությունը իրական կյանքում ոչ միշտ է կայացել որպես մարդկային կյանքի իրադարձությունների ու գործերի բուն իսկություն հայտող ստույգ ու ճշտիմաց միտք ու տեսություն: Եվ սակայն սկզբունքային տեսակետից ունեցել է և ունի, արդյոք սոցիալական գիտությունը որպես ճշտիմաց միտք իր գոյության համար նույնորեն գոյություն ունեցող հիմքեր և, այդպիսով, իր գոյության համար սկզբունքային հնարավորություն:

Այս հարցի պատասխանին ձմարտորեն մոտենալու, հասկանալու ու մեկնորոշելու համար էական է նախ որպես սկզբունքային դրույթ ամրագրել մտքի հետևյալ բանաձևը. **ամենայն գոյի որպես այդպիսին գոյության իմաստը իր կոչմանը համապատասխան լինելությունն է:** Եվ սակայն, այս աշխարհի իրականությունում մարդկային կյանքի իրողությունները ոչ միշտ են իրենց բուն կոչմանը համապատասխան լինելությամբ կենագործվել: Ըստ այդմ՝ այս կյանքում մարդկային ամենայն միտք, խոսք և գործ իրենց բուն կոչմանը համապատասխան լինելության պարագայում ներկայանում են իրենց իսկությամբ, նույնն է թե՛ իսկական գոյությամբ, և, ընդհակառակը, անհամապատասխանության պարագայում՝ անիսկությամբ, նույնն է թե՛ անիսկական գոյությամբ, կամ իրենց բաղադրակազմության որևոր տարրերի իսկության ու անիսկության համատեղյալ խոնահյուսությամբ:

Ամենայն սոցիալական գիտություն նույնպես մարդկային կյանքի իրողություն է և ոչ միշտ է նախկինում եղելականացել կամ այժմեականությունում ներկայանում իր բուն կոչմանը համապատասխանությամբ որոշարկ-

վող իսկությամբ ու հենց խորհուրդով իմաստալից գոյությամբ, այլ երբեմն՝ անիսկությամբ ու անխորհուրդ, ունայն ու իմաստագուրկ գոյությամբ: Ամենայն «իրաց և գործոց» և նույնիսկ գիտությունների իրական գոյությունը էապես կարող է տարբերվել ըստ իրենց բուն կոչումի գոյությունից: Այնինչ, ամենայն գոյի, ըստ իր բուն կոչումի, գոյությունն է, որ և անվանվում է՝ գոյի որպես այդպիսին գոյություն (այլ ոչ՝ այլակերպված գոյություն), ինչը և ներկայանում է որպես գոյի անհրաժեշտ ու նախընտրելի գոյություն:

Արդ՝ ինչպիսին է, երբեմն ի տարբերություն նախկին և-կամ ժամանակակից իրական գոյության, «սոցիալական գիտության» և կոնկրետորեն՝ «սոցիալական իմաստասիրության» ու «սոցիոլոգիայի» **բուն կոչումը** և ըստ այդմ՝ **անհրաժեշտ ու նախընտրելի գոյության իսկությունը**:

Սոցիալական գիտությունները և կոնկրետորեն՝ սոցիալական փիլիսոփայությունն ու սոցիոլոգիան կյանքի են կոչվել **մարդուն և մարդկային կյանքը**, որոնցում և՛ «բուն մարդկայինը», **ճանաչելու և կատարելագործելու** համար: Մեկ այլ բանաձևում կարելի է ասել, որ **սոցիալական փիլիսոփայությունն ու սոցիալական գիտությունն ընդհանրապես և նրանում յուրաքանչյուր գիտակարգ գոյության է կոչված հասարակության կյանքում բարեկարգության հաստատման կարիքով և դիտավորությամբ**:

Ասացյալը, անշուշտ, չի նշանակում որ սոցիալական գիտությունը և կոնկրետորեն՝ սոցիոլոգիան իրական կյանքում իր դրսևորման մեջ կայացել է ըստ իր այդ կոչման: Երբեմն ու նույնիսկ հաճախ այն թերացել կամ թյուր կերպով է ինքնահասկացել մարդկային կենսագոյությանն ու համակեցությանը կարծես հանկարծահաս հանդիպած **կենսական հիմնախնդիրները**՝ ի վերջո չկարողանալով առաջարկել պատճառագետ և հետևանքներին ու նշանակալիությանը նույնպես գիտակ, այդ հիմնախնդիրները հաղթահարող ադեկվատ լուծումներ՝ ուղենպաստ, «աճեցնող» ու կատարելագործող մարդկային **ընդհանուր կենսակարգն** ու **ազատականորեն ընտրյալ կենսակերպը**՝ առ բարեկարգություն: Կենսական այդ հիմնախնդիրների թվում կարելի է նշել մասնավորապես սոցիալական գիտությունների կողմից 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի առաջին տասնամյակում ոչ միշտ կանխատեսված, այլ հաճախ հանկարծադեպ խնդրադրված բազում իրողություններ՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամը, մուլտիկուլտուրալիզմի գաղափարախոսության անկումը, ռադիկալիզմի և ահաբեկչության կտրուկ աճը, ժողովրդավարության սկզբունքների «տարածման» արդյունքում առաջացող կոնֆլիկտներն ու պատերազմները, միգրացիոն հոսքերը, համամարդկային արժեքների խարխլումը և այլն: Ինչպես նշում է ռուս փիլիսոփա Լ. Ի. Պախարը, այդ ամենն անակնկալ էր երկար ժամանակ էմպիրիկ ընդհանրացումների և վիճակագրական վերլուծությունների հիման վրա գործառնող գիտնականների համար. « ... պաշտոնական գիտությունը ոչ միայն չկարողացավ կանխատեսել այդ երևույթները, այլ նաև որոշակի պարզաբանումներ տալ այդ գործընթացների վերաբերյալ և առաջարկել ճգնաժամից դուրս գալու համարժեք ուղիներ»¹²:

Արդ՝ կարելի է ամրագրել, որ **սոցիալական գիտության անհրաժեշտ**

12 Пахарь Л. И., К вопросу о категориальном аппарате социальной философии, «Ученые записки Орловского государственного университета», N 4 (54), 2013, с. 223-224.

ու նախընտրելի գոյությունը հիմնացյալ է մարդկանց համատեղ կյանքի որպիսության ուսումնասիրության և առ բարեկարգություն ներկատարելագործման կարիքի վրա:

Հարկ է նաև հաստատագրել, որ սոցիալական գիտության անհրաժեշտ ու նախընտրելի գոյությունը կայանում է որպես մարդկանց համատեղ կյանքի՝ առ բարեկարգություն ներկատարելագործման կարիքի իդեալին մտահայեցող ու այդ կարիքի հոգածությանը հետամուտ դիտավորություն և ըստ այդմ՝ կերպարանում ու կատարում: Ահավասիկ, սոցիալական գիտությունը չի ներկայանում որպես անհիմն ու անհող, թվացյալ ու կարծեցյալ, սուկ մտացածին ու պատրանքային գոյությամբ, այլ գոյություն ունի իրապես և որպես իր գոյության հիմք, կամ իրեն գոյացնող իրական առարկայական հենք ունի ամենայն անձանց, խմբերի, հանրույթների, ազգերի, հասարակության ու բովանդակ մարդկության նախկին և-կամ ժամանակակից հոգևոր-քաղաքակրթական ինքնության, ընդհանուր կենսակարգի, ազատականորեն կամ ստիպողականությամբ հարկադրյալ կենսակերպի, կենցաղաստեղծ ու մշակութաստեղծ գործունեության ուսումնասիրության և առ բարեկարգություն ներկատարելագործման կարիքը, այդ կարիքի հոգածության դիտավորությունը և ըստ այդմ՝ կերպարանումն ու կատարումը:

Սոցիալական գիտության «ինչպես» գոյության վերոբերյալ հարցման կիզակերպ ու իսկության դուռ բացող և սեփական գոյության իմաստ բացահայտող քննության սկիզբ, հարցվողի որոշակիացում ու որոնումի ուղենշում է ներկայանում այլ հնարավորություն ևս. **ինչպիսին է սոցիալական գիտության այն գոյությունը, որում կայացյալ է նրա իսկությունը և ապահովված նրա օբյեկտիվությունը:** Քանզի սոցիալական գիտության որպես այդպիսին գոյության իսկության բացորոշման խնդրակարգի ուղղությամբ հերմենևտիկական հետևողական հարցման մեջ, իրոք, սկզբունքային ու հենց առաջնահերթ նշանակություն ունի հետևյալ կետը. **ինչպես է հնարավոր և հենց կայանում սոցիալական գիտության օբյեկտիվությունը:** Եվ հիշենք, որ այս հարցի առաջնահերթությունն ու կարևորությունը նկարի ունենալով՝ Մնարս Վեբերը առանձին աշխատություն է նվիրում սոցիալական ճանաչողության օբյեկտիվության ուսումնասիրությանը՝ ուղղակիորեն այդկերպ վերնագրելով այն¹³: Հարկ է ամրագրել, որ երբ խոսվում է որևէ բներևույթի¹⁴ (Ֆենոմենի) օբյեկտիվության մասին, պետք է ցույց տրվի, թե ինչպես է հնարավոր այդ օբյեկտիվությունը՝ որպես այդպիսին, ինչպես այն կարող է կայանալ: Բացահայտել սոցիալական գիտության

13 Տե՛ս **Вебер М.**, Объективность социального познания, «Избранные произведения», М., 1990, էջ 345-415:
14 Ֆենոմենի գոյութնական այս բնբնումը դուրս է գալիս հուսեռյան ֆենոմենոլոգիայի շրջանակներից և որպես այդպիսին իր ձևակերպումը ստանում է. Հայդեգերի կողմից վերաիմաստավորված ճշգրտմամբ: Է. Հուսեռյի ֆենոմենոլոգիայում ասելով «ֆենոմեն»՝ նկատի է առնվում ճանաչողական իրադրության ու հարաբերակցության մեջ միայն որոշարկելի և ուրեմն իդեական կամ ոգեղեն բնություն ու բովանդակություն ունեցող «ինքն իրեն ցուցանող երևույթ», այլ ոչ որպես այնպիսի «ֆենոմեն», որն իրենից անդին ունի նաև էություն, ինչպես ընդունված էր նախկինում: Հուսեռյան այս հասկացությունը մեր մենագրություններում գործածված է Մ. Հայդեգերի վերաիմաստավորմամբ՝ որպես ամենայն ճանաչողական իրադրությունից ու հարաբերակցությունից առաջ արդեն իսկ անհրաժեշտաբար **գոյություն** ունեցող՝ «գոյութնական ֆենոմեն», որը և թարգմանաբար կարելի է հայերեն փոխանցել «բներևույթ (բուն երևույթ)» կամ «ինքն-ներևույթ» (ինքն իրեն երևեցուցանող, հայտնող, ցուցադրող երևույթ) բառերերի միջոցով, այդկերպ անվանմամբ նկատի ունենալով **գոյություն ունեցող և հենց իր գոյությամբ ինքն իրեն ցուցանող երևույթ:** Տե՛ս **Хайдеггер М.**, Исследовательская работа Вильгельма Дильтея и борьба за историческое мировоззрение в наши дни. «Десять докладов прочитанных в Касселе (1925)», В.Ф., 1995, N 11, с. 128-129, տե՛ս նաև **Хайдеггер М.**, Бытие и время, Изд. «AD Marginem», М., 1997, с. 28-31): Իսկ «phenomenon» բառերի որպես «բներևույթ» թարգմանությունը տե՛ս **Ընդարձակ Բառարան Անգլիերեն - Հայերեն**, աշխատասիրությամբ պրոֆ. **Յ. Յ. Զազմագճեան**, «Երան Գրատուն», Պոսթըն, 1922, էջ 1044:

օբյեկտիվությունը՝ կնշանակի բացորոշել նրա գոյության, ինչպես նաև այդ գոյության վերաբերյալ գիտելիքի օբյեկտիվության կայացման **հնարավորությունն ու կապարտումը**: Նկատելնք, որ սոցիալական գիտության օբյեկտիվության հիմնախնդրի լուծման խորհրդածությունն իրենտու նկատի ունի մարդկային կյանքի իրողությունների, որպես այդ գիտության օբյեկտի, իրական գոյության հետ մեկտեղ՝ նաև աղեկվար բացթաթամբ կայացող «սոցիալական գիտահայեցակարգի» ու «մեթոդաբանության» որպիսության բացորոշում:

Ասել, թե որևիցե մի բան և այդ թվում նաև սոցիալական գիտությունը օբյեկտիվ է, կնշանակի, թե այն զուր կամայական, մրացածին և այդպիսով, պարբանքային չէ, այլ ունի **օբյեկտային** հենադրություն: Որևէ ճանաչողության, մրքի, հայեցակարգի և կամ գիտակարգի օբյեկտիվությունը նախ և առաջ նկատի ունի դրա **օբյեկտայնությունը**, օբյեկտային հենադրությունը, այլ ոչ սուկ կամայածին մակամրածություն (Դավիթ Անհաղթ), այսինքն՝ մրքից մակածված ու սուկ հորինված լինելը: Արդ **մարդուն և մարդկային կյանքը, որոնցում և՛ «բուն մարդկայինը», ճանաչելու և կարարելագործելու և հասարակության կյանքում բարեկարգություն հասարարելու կարիքն ու դիտավորությունը օբյեկտային հենց այն հենադրությունն է, որ և հիմնում է սոցիալական գիտության գոյությունը, ապահովում նրա օբյեկտիվությունը և հնարավորում նրա իսկությունը՝ ըստ իր բուն կոչման:**

Եվ նկատելնք, որ մարդկային կյանքի ոչ ամենայն ինչ է սոցիալական գիտությունն արժանի դիտում ուսումնասիրության, ուստի և՛ քննահասկացման ու մեկնորոշման և ապա՝ առ բարեկարգություն գործնական միջամրությանը կարարելագործման ենթակա: **Մարդկային հոգևոր-քաղաքակրթական ու բարոյական ինքնությունը, համարել կյանքն ու մշակոյթն էացնող, ուստի և՛ սկզբունքորեն էական ու նշանակալի և այդկերպ՝ իմաստ ու նաև իմաստության խորհուրդ իրենցում ներհայրող իրադարձություններն ու գործերն են, որ որպես այդպիսին, կարող են դառնալ և իրարպես դառնում են սոցիալական գիտության ուսումնասիրության ու գործառնության ենթակա «խնդրո նյութ», նոյնն է թե՛ առարկա, և «խնդրո բան», նոյնն է թե՛ այդ առարկայի հետ բուն նպարակային «անելիք» ու հենց անհրաժեշտ ու նախընարելի կարարում:**

Եվ էական է նկատել, որ մարդկային կյանքի իրադարձություններն ու գործերը հենց այդ նշանակոյթային կամ իմաստային բովանդակոյթյան պորենցիայով են միայն, որ իրենց իսկոյթյան ու իմաստի նկարմամբ հետագորող՝ ընթերցասեր ու ուսումնասեր անձանց աղեկվար բացոյթյան ու հասկացման պարագայում, նրանց մրավոր րեսանելիոյթյանն առդեմ կայանում, հասկացվում ու բնորոշվում են որպես այդպիսին՝ իրադարձոյթյուն և կամ գործ: Եվ որպես նշանակալի իմացյալ իրերն ու գործերն են հենց կոչված սոցիալական հետագորողի հասկացման ու մեկնորոշման՝ բարենշանակ սիրով ձգմանն ու ջանքին: Ճշմարիտ, բարի ու արդար է, երբ ոչ թե աննշանակ, այլ հենց էականորեն նշանակալի և այդպիսով «ասուն» իրադարձոյթյուններն ու գործերն են, որ հենց որպես այդպիսին՝ անհրաժեշտոյթյամբ ու նախընարելի պիրոյականոյթյամբ դառնում են սոցիալական գիտոյթյան ուսումնասիրոյթյան օբյեկտ և իրենցով իսկ՝ իրենցում ներկա կամ պարունակյալ նշանակոյթյամբ, գոյացնում սոցիալական գիտոյթյունը: Այսպիսով, **սոցիալական գիտոյթյունն իրարպես գոյոյթյուն ունի և գոյոյթյուն ունի հենց մարդկային հոգևոր-քաղաքակրթական համարել կյանքի իրադարձոյթյունների ու գործերի բազմարբովանդակ իսկոյթոյնն արարահայրող իմաստների վրա հիմնադրվածոյթյամբ:** Կարելի է ամրագ-

րել սոցիալական գիտության առանձնահատկությունն ու իսկությունն հայտնող մարքի հեղինակության և անվտանգությանն՝ համայն մարդկությանն ու ամենայն ազգերին, ժողովուրդներին, հասարակությանն ու կոնկրետորեն՝ հայոց հոգևոր-քաղաքակրթական ինքնությանն ու համակեցությանն էականորեն նշանակալի եղելումն իրադարձություններում, գործերում ու կենսակարգերում արդեն իսկ ներկա, որով և՛ դրանք որպես այդպիսին դարձնող նշանակալիությունն է՝ պարզապես-հեղինակության իր փոխկապակցվածությամբ հանդերձ, որ հասկացմամբ ու մեկնողաբար բացորոշմամբ՝ ներկայանում է որպես սոցիալական գիտության բովանդակային խորհրդիմացություն: Սա է սոցիալական գիտության **օբյեկտայնությունը**, այլ կերպ ասած՝ **սոցիալական գիտության գոյացման օբյեկտային հիմնավորվածությունը** և դրա բացահայտմամբ՝ **տեսական հիմնավորումը**: Սոցիալական գիտությունը ևս մարդկային իրողությունների ոլորտին պատկանող մի գոյավոր է, արդարև, գոյությունից ծնված ու մրտավոր մի գոյացությունն է, այդպիսով, սուկ կամայածին մարքի արգասիք և գոյությանը չառնչվող ֆենոմենն է¹⁵: Ահավասիկ, սոցիալական գիտության գոյության որպիսության ամբողջական՝ բազմաբովանդակ ու մեկ-միասնական խնդրակարգի բացահայտման համար մասնաբաժնորեն չորս հարցերի հաջորդականությամբ ներկարգավոր քննության առաջին հարցի՝ «գոյություն ունի, արդյոք, սոցիալական գիտությունը», առնչությամբ կարճաժամպ ու լոկ անհրաժեշտ չափով պատասխանը:

3. Սոցիալականը որպես «սոցիալական գիտության» ուսումնասիրության առարկա

Արդ մեկնորոշյալ «գոյություն ունենալու» հարցի հետ մեկտեղ ու հաջորդական է նաև հարցադրել, որ «եթե այո, գոյություն ունի, ապա ինչպե՞ս գոյություն ունի սոցիալական գիտությունը որպես այդպիսին» և թե՛ «ինչպիսի՞ն է սոցիալական գիտության գոյության յուրահատուկ, սեփական մոդուլը», կամ ըստ կանտյան հարցադրման՝ «ինչպե՞ս է հնարավոր սոցիալական գիտության գոյությունը որպես հենց գիտություն» և նույնիսկ վերջինը, ըստ հեղինակների միասնական տեսակետի, առավել ճշգրտող ու կատարելագործող լրացմամբ՝ «ինչպե՞ս է սկզբունքորեն հնարավոր, անհրաժեշտ ու նաև նախընտրելիորեն պիտոյական սոցիալական գիտության գոյությունը որպես այդպիսին»: Նկատենք, որ դեռ միայն գոյություն ունենալը ու հաջորդիվ՝ այդ գոյության կերպը, այսինքն՝ «ինչպե՞ս»-ը (սոցիալական գիտության «ինչպե՞ս» գոյությունը) հարցադրելով, հնարավոր չէ առանձին պատասխանել այդ հարցին՝ չառնչելով այն հարցին, թե ինչ է այն իրողությունը, որի գոյության կերպը կամենում ենք բացորոշել: Չէ՞ որ **գոյի, իրի կամ իրողության «ինչ» բնությունը պայմանավորում է այդ «ինչ»-ին աղեկվատ «ինչ-պես» գոյությունը**:

Սոցիալական գիտության առաջին՝ գոյության վերաբերյալ հարցի դրական պատասխանի դեպքում հետևողական է արդեն նաև առաջադրել երկրորդ հարցը՝ «ինչ է սոցիալական գիտությունը» և ապա՝ երրորդ հարցը՝ «ինչպիսի՞ն ինչ է սոցիալական գիտությունը, կամ որ նույնն է՝ «որպես ի՞նչ գոյություն ունի սոցիալական գիտությունը», որոնց ստույգ պատասխանը

15 Վերոասացյալ հիմնավորումը նաև պատմագիտության նկատմամբ իր յուրահատկություններով հանդերձ կոնկրետորեն կիրառությամբ տեն **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինգոն», Եր., 2016, էջ 287-288:

հենց սոցիալական գիտությունը որպես այդպիսին բաղկացնող, գոյացնող կամ **էացնող** և ուրեմն՝ **էական** ու այդպե՛րպէ՛ գոյավոր այլ ամենից զանազանող առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու բացահայտումն է, նաև այդ հիմնորոշ առանձնահատկություններն ի մի բերող կարճառոտ սահմանումն ու մանրամասն մեկնաբանությունը:

Չորրորդ հարցի՝ «ինչի՞ համար է սոցիալական գիտությունը» և ըստ այդմ՝ «ինչ նպատակով ու իմաստավորվածությամբ գոյություն ունի սոցիալական գիտությունը» հարցադրությանը ստույգ պատասխանով բացորոշվում է սոցիալական գիտության որպես այդպիսին գոյության բուն կոչումը, նպատակն ու նաև մարդկանց կյանքում նշանակալիությունը, որ և նախորդ կետում մտքի կարճառոտ բանաձևով արդեն սկզբունքորեն մեկնորոշվեց:

Ասվեց նաև, որ «իրաց ու գործոց» և հենց «սոցիալական գիտության» իրական ու կոնկրետ գոյությունը կարող է և չլինել իր բուն կոչմանը համապատասխան, այլ, ընդհակառակը, լինել այլակերպված ու հենց խեղաթյուրված իր բուն իսկությունից, արդ՛ բուն իսկությունը հասկանալով առավել խորին ու ճշգրիտ իմաստով: Ո՞րն է այն: «Իսկությունը» և հենց «իսկական գոյությունը» կարող է հասկացվել նաև ստույգ ու հենց վերին իր իմաստով՝ որպես ամենայն «իրաց և-կամ գործոց» ու հենց սոցիալական գիտության՝ **իր բուն կոչմանը համապատասխան՝ անհրաժեշտ ու նախընտրելի գոյություն**, որ և կարող է չնմանվել, չհամընկնել ու չնույնանալ նրա իրական ու կոնկրետ՝ տվյալ ժամանակում առկա գոյության հետ և հենց տարբերվել այս կյանքում իր որևոր կերպով ու չափով և՛ իսկության, և՛ անիսկության խոնհայուս գոյությունից: Եվ սոցիալական գիտության իսկություն հայտող խորհրդիմացությունը հասանելի է միմիայն սոցիալական գիտության անհրաժեշտ ու նախընտրելի գոյության որպիսության քննախորհրդածությամբ:

Սոցիալական գիտության և աստ կոնկրետորեն՝ սոցիալական իմաստասիրության ու սոցիոլոգիայի խնդրակարգի լուծումն իր լրումին կարող է հասանել, եթե սոցիալական գիտության որպես այդպիսին գոյությունը բաղկացնող էական առանձնահատկությունների մեկտեղմամբ բացահայտվի նրա անհրաժեշտ ու նախընտրելի ներկայությունը, որ և կնշանակի՝ մեկնությամբ հանդերձ բացորոշ ձևակերպվի սոցիալական գիտության **սահմանումը**: Արդարև, ամենայն գոյի գոյության և աստ կոնկրետորեն՝ սոցիալական գիտության գոյության ստույգ ճանաչողության ու իմացության առնչությամբ սկզբնուղի ու առաջնահերթ դիտավորություն է՝ սահմանել ուսումնասիրության ենթակա ամենայն իրողություն: Իսկ ինչո՞ւ է անհրաժեշտ ու նախընտրելի առաջնահերթորեն սահմանել ուսումնասիրվող իրողությունը՝ սոցիալական գիտությունը: Դավիթ Անհաղթն այս առնչությամբ հիշատակում է Պլատոնի միտքն առ այն, որ «Եթե կամենում է մի ոք որևէ իրի (իրողության) մասին ճշմարտաբար խորհել և մտածել, պարտավոր է նախ գիտենալ այդ իրի բնությունը, այսինքն՝ սահմանումը»¹⁶: Քանզի սահ-

16 «Եթե կամի ոք յաղագս իրի ուրուք ճշմարտաբար խորհել և մտածել, պարտ է նախ գիտել գնորին իրի բնութիւնն, այսինքն՝ զսահմանն» (**Դավիթ Անյաղթ**, Սահմանք իմաստասիրութեան, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», Եր., 1980, աշխ. Ս. Արևշատյանի, էջ 38):

մանումը հակիրճ միտք է, նույնն է թե՛ կարճաժողով մտքի այնպիսի մի բանաձև, որում հայտորոշվում է սահմանվող իրը, աստ՝ սոցիալական գիտությունը, որպես այդպիսին բաղկացնող, էացնող և ուրեմն՝ էական հատկությունները: «Սահմանումը կարճաժողով խոսք է՝ իրի բնությունը բացահայտող»¹⁷: Իսկ բացահայտել իրի բնությունը, առավել մանրակերտորեն կնշանակի՝ բացահայտել իրի որպես այդպիսին գոյության որպիսությունը: Եվ բացահայտել իրի որպիսությունը, իր հերթին կնշանակի՝ բացորոշել իրի որպես այդպիսին գոյության իսկությունը հայտող իմաստը, որում և պահյալ իմաստության խորհուրդը: Այսպիսով, ուսումնասիրության ենթակա «սոցիալական գիտություն» գոյավորի գոյության իսկության վերաբերյալ ամենայն խորհրդածություն ի մի բերող և կարճաժողով բանաձևմամբ սոցիալական գիտության բնությունը բացահայտող միտքը հենց «սոցիալական գիտության» սահմանումն է: Արդ՝ հասկանալ և մեկնողաբար բացորոշել **սոցիալական գիտության որպես այդպիսին գոյության իսկությունը**, կնշանակի, որպես այդ ամենի կատարում ու մտքի բանաձևային ամրագրում, **սահմանմամբ բացահայտել սոցիալական իմաստասիրության կամ սոցիոլոգիայի բնությունը՝** սահմանումի բանաձևումն իրագործելով նրա բովանդակության մանրամասն մեկնությամբ հանդերձ, որով և մեկնահայտելով սոցիալական գիտության բնությունը բաղկացնող կամ էացնող և ուրեմն՝ **էական** առանձնահատկությունները, որ և ներկայանում են հենց նրա բուն իսկության առանձնահատկությունները:

Սոցիալական գիտության իսկության բացորոշման ուղղությամբ քննողական որոնումի և հասկացման ձգտող խորհրդածությունների առաջիկա հարցը, այսպիսով, վերաբերում է սոցիալական գիտության սահմանմանն ու մանրամասն մեկնաբանությանը, որում և՛ սոցիալական գիտության բնության բացահայտմանը: Իսկ ինչպիսի՞ հարցադրության կարգով կարելի է բացահայտել սոցիալական գիտության բնությունը, նույնն է թե՛ սոցիալական գիտության որպես այդպիսին գոյության իսկությունը: Արդ՝ սոցիալական գիտության սահմանման բանաձևի վերաբերյալ խորհրդածությունն իրագործելով ըստ Դավիթ Անհաղթի աստվածաբանող իմաստասիրության ուսուցանության, առաջիկա քննության հարցերն են՝ «ի՞նչ է», «ինչպիսի՞ ինչ է» և «ինչի՞ համար է սոցիալական գիտությունը»:

Հետևելով սահմանման տեսության վերաբերյալ ևս Դավիթ Անհաղթի ուսուցանությանը՝ նշենք, որ երբ հարց է տրվում, թե «ի՞նչ է», ի պատասխան ասվում է **անունը**, աստ՝ «սոցիալական գիտություն» և կոնկրետորեն՝ «սոցիոլոգիա» կամ «սոցիալական իմաստասիրություն», իսկ երբ հարց է տրվում, թե «ինչպիսի՞ ինչ է», ի պատասխան արդեն սահմանմամբ բացորոշ նշվում են դրանց հիմնորոշ ու էական, այսինքն՝ որպես այդպիսին էացնող, գոյացնող և այլ գոյերից սկզբունքորն զանազանող հատկությունները: Եվ երբ սահմանվում է սոցիալական գիտությունը, ի պատասխան ասվում է՝ «գիտություն» է, այդկերպ առաջնահերթորեն նշելով ընդհանուր սեռային հատկությունը և ապա՝ բաղկացուցիչ ու այլից զանազանող հատկությունները: Ահավասիկ, անունը ներկայանում է որպես կարճաժողով սահմանում,

17 «Սահման է բան կարճաժողով, յայտնիչ բնութեան ենթակա իրի» (նույն տեղում, էջ 40): Հաջորդող էջերում իմաստասերը տալիս է նաև սահմանման սահմանումի մեկնությունը (տե՛ս նույն տեղը, էջ 40-42):

իսկ բաղադրիչ հատկությունների բացորոշմամբ սահմանումը՝ որպես ծավալուն անուն¹⁸:

Նշենք նաև, որ սոցիալական գիտության սահմանումը կարող է լինել և՛ ըստ իր տեսականորեն ուսումնասիրության ու պրակտիկորեն գործառնության **առարկայի**, և՛ ըստ **կատարումի**՝ թե ինչ է այդ գիտակարգը «անում» իր առարկայի հետ, այսինքն՝ ինչպիսին է գիտակարգի բուն «անելիքը» իր առարկայի նկատմամբ, և երկմիասնությամբ՝ ըստ առարկայի ու կատարումի: Եվ աստ հարկ է նաև նշել, որ սոցիալական գիտության կատարումը կարող է լինել և՛ տեսական, և՛ գործնական: Արդ՝ **սոցիալական գիտության տեսական կատարումն** այն է, թե մարդկային կյանքում տեսա-ձանաչողական իր գործառնությամբ ինչ է «անում» գիտակարգն իր ուսումնասիրության առարկայի հետ, օրինակ՝ **բացահայտում է ճշմարտությունն ու բարին՝ բարեկարգություն հնարավորող, ներկատարելագործող իմաստն ու իմաստության խորհուրդը**: Իսկ նրա գործնական կատարումն այն է, թե ձանաչմամբ հանդերձ՝ ինչ է «անում» սոցիալական գիտակարգն իր առարկայի հետ մարդկային կյանքում արդեն նաև գործնական իր գործառնությամբ, օրինակ՝ **գործում բարին՝ սատարագետ աջակցությամբ հնարավորում, նպաստում կամ ապահովում է մարդկային կյանքի ներկատարելագործումն առ բարեկարգություն**:

Նկատենք, որ սոցիալական գիտության վերաբերյալ գրեթե բոլոր սահմանումներում, երբեմն միայն հայտնի տեսաբանների աշխատություններում եզակի բացառություններով, սոցիոլոգիան առավելապես սահմանվում է ըստ առարկայի: Սոցիալական գիտությունները որպես այդպիսին (գիտություն), ներկատարելագործմամբ կայանում ու հենց ներկա են՝ իրենց ուսումնասիրության առարկայական տիրույթ ունենալով «մարդկային կյանքի իրողությունները»: **Կյանքը և կոնկրետորեն նաև մարդկային կյանքը ներկայանում է որպես ժամանակընթաց, ինքն իրենում ներքուստ դինամիկորեն ծավալվող, համայնն իրենում ընդգրկող ու միասնացող հոգե-նյութեղեն գոյացություն**:

Սոցիալական գիտության գոյություն ունեցող սահմանումներում մարդկային կյանքի իրողությունների համայնությունից «ինչ»-երն են անվանվում ու նշվում որպես ուսումնասիրության առարկա, որոնցով և նկատի է առնվում ամբողջական այդ համայնության համընդգրկումը նրա քննության ոլորտում: Մասնավորապես սոցիոլոգիան, իր սահմանումներում անվանելով, թե «ինչ»-ն է ինքն ուսումնասիրում՝ «սոցիալական խմբեր» կամ «սոցիալական համակարգեր», որում խմբերի հետ մեկտեղ նկատի ունենալով նաև «անձին», «սոցիալական կարգավիճակ» ու «սոցիալական գործողություն», «սոցիալական հաստատություններ (ինստիտուտներ)», «սոցիալական երևույթներ ու գործընթացներ», իր առարկայի բովանդակությունը որոշարկում է բաղադրակազմի տեսակային բացորոշմամբ, այսինքն՝ ուսումնասիրության ենթակա ոլորտը, առարկայական տիրույթն ու համայնությունը կազմող իրողությունների որակական տեսականու թվարկմամբ և այդկերպ, կարծես, փորձում որակական զանազանության քանակական թվարկմամբ բաց չթողնել սոցիալական այդ իրողությունների և ոչ մի առանձին բացորոշ

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 40-41:

սեռ կամ տեսակ և այսպերպ՝ բոլորել ուսումնասիրվող ոլորտի պարունակ ընդգրկությունը: Նկատենք, որ սոցիոլոգիան իր այդպերպ սահմանման բովանդակությունում և թվարկությունում չի տեսնում իր ուսումնասիրությանը ենթակա առարկայական տիրույթի, կարելի է նաև ասել՝ «լսնդրո նյութ» սոցիալական ֆենոմենների, **իրենց առանձնահատուկ գոյության կերպի մեջ** հասկացվածություն, ուստի և ադեկվատ հասկացություններով անվանում ու ընդգրկում: Սոցիոլոգիայի սահմանման մեջ կարող են լինել «սոցիալական խմբեր» կամ «սոցիալական համակարգեր ու ենթահամակարգեր» հասկացությունները և, այսպիսով, նկատի առնվել ու ընդգրկվել օրինակ՝ «երիտասարդություն», «ընտանիք», «տարեց միայնակներ», «դպրոցահասակ երեխաներ» խմբերը, սակայն **չներկայացվել ու քննության չառնվել այդ խմբերի (ինչպես ամբողջության, այնպես էլ՝ որոշակի խմբատեսակի ու քանակի)՝** **իրենց «կարիքավորության»,** **ինչպես նաև «առավելության» կամ «ներուժի» մեջ գոյության առանձնահատկությամբ,** ուստի և հետագոտության արդյունքները կարող են և ոչ-ադեկվատ լինել նույն այդ խմբերի նկատմամբ: Ինչհի: Քանզի եթե սոցիալական գիտությունը, ուսումնասիրելով անձը, խումբը, հանրույթը, ազգը, հասարակություններն ու մարդկությունը և այդ ամենում՝ մարդկային ինքնությունը, կյանքը, մշակույթն ու ստեղծարար գործունեությունը՝ առ հոգեկեցույց ու կենսարար բարեկարգություն և, որպես իր համար առաջնահերթ ու հիմնորոշ հարց, սկզբունքորեն չի հարցադրում և ուսումնասիրում բուն **կարիքը,** որ և **այդ ամենի որպիսության նվազությունը, տկարությունն ու պակասն է բարեկարգության համեմատ,** և դրա հետ մեկտեղ չի հարցադրում նաև (տկարությունների համեմատ) **առավելությունները** (կամ որպես առավելություն դիտվող **ներուժը**), որ և կարող էր սատարագետ հոգածության կամ աջակցության պայմաններում՝ կրթությամբ աճել հմտության, արվեստի ու բանիմաց գիտելիքի և գրավական լինել կարիքի հաղթահարման, ապա ամենայն ինչ՝ ոչ-էութենական ու երբեմն՝ նաև շեղությամբ կամ թեքությամբ հանդերձ, որ հարցադրում և ուսումնասիրում է սոցիոլոգիան՝ ոչ-ուղենպաստ իր բուն կոչումին, ըստ այդմ՝ դիտավորությանն ու կատարումին, միմիայն ունայնություն է հավելում մարդկանց հոգևոր-քաղաքակրթական կյանքում:

Արդարև, երբ սկզբունքային նպատակամիտությամբ հարցադրվում ու բացահայտվում է **կարիքավորությունը,** ըստ էության, ճանաչվում, հասկացվում է մարդկային ինքնության, կյանքի ու մշակութաստեղծ գործունեության՝ բարենշանակորեն ներկատարելագործվող իրենց անհրաժեշտ ու նախընտրելի որպիսության համեմատ՝ էականորեն պակասը, իրականորեն գոյություն ունեցողն ու հենց օբյեկտիվը: Իսկ երբ ուսումնասիրվում է **պահանջմունքը,** հարկ է նկատել, որ այն կարող է լինել սուբյեկտիվ, կամայական, որևոր չափով կամ լիովին մտացածին և ուրեմն՝ ոչ միշտ ներկայանալ որպես բուն **կարիքի գիտակցում:** Ասացյալը չի նշանակում, թե սկզբունքորեն չպետք է ուսումնասիրել պահանջմունքը, այլ միմիայն կարիքը, քանզի եթե անգամ պահանջմունքը կարիքի գիտակցումը չէ և սուբյեկտիվ, կամայական ու պատրանքային է, այնուամենայնիվ, այդպիսի պահանջմունքը նույնպես կարող է լինել **մոտիվ** ու հենց **պատճառ** անձանց, խմբերի, հանրույթի, հասարակության, կառույցի կամ հաստատությ-

յան որևոր «սոցիալական գործողության» և մարդկային կյանքում ունենալ էական հետևանքներ՝ արժանի ու ենթակա սոցիալական գիտության ու հետազոտության ուշադրությանն ու քննությանը:

Հարկ է նաև նկատել, որ սոցիոլոգիայի այնպիսի սահմանումը, որում առավելապես անվանվում են միայն ուսումնասիրության ենթակա տիրույթը կազմող «ինչերը», տեսակային զանազանությունների թվարկմամբ, չհետևելով ոչ միայն տրամաբանության մեջ սահմանման ու բաժանման վերաբերյալ վաղուց մշակված կանոններին, այլև իմաստասիրությունից հայտնի ունիվերսալ սկզբունքներին ու նաև հենց սոցիոլոգիայի հայտնի տեսաբանների աշխատությունների գիտական ձեռքբերումներին, ըստ էության արատավոր ու ոչ կատարյալ սահմանում է: Սահմանման մեջ հարկ է ոչ միայն անվանել ուսումնասիրության և գործունեության ենթակա «ինչը», այլև բացորոշել «ինչպիսի ինչը», այսինքն՝ թե ինչպիսի «ինչն» է սոցիոլոգիայի կողմից տեսնվում որպես իր խնդրո նյութ, իր ուսումնասիրության առարկայական տիրույթ: Ինչո՞ւ:

Հիշենք, թե ինչ է սահմանումը: Ինչպես արդեն մեջբերվեց, Դավիթ Անհաղթի աշխատության մեջ սահմանման սահմանումը ձևակերպված է հետևյալ կերպ. «սահմանումը կարճառոտ խոսք է՝ ենթակա իրի բնությունը բացահայտող»¹⁹: Ըստ այս բանաձևի, սոցիոլոգիայի սահմանումը որպեսզի բացահայտի սոցիոլոգիայի բնությունը, կամ այլ կերպ ասած՝ սոցիոլոգիայի որպես այդպիսին գոյության իսկությունը, հարկ է, որ իրենում բացորոշի նախ սոցիոլոգիայի ուսումնասիրության ենթակա խնդրո նյութ իրողությունների, երևույթների ողջ տիրույթի սկզբունքային ու հիմնորոշ առանձնահատկությունը: Սոցիոլոգիայի բնության առանձնահատկությունն անմիջականորեն պայմանավորված է իր հետազոտությանը ենթակա գոյավորության ողջ տիրույթի այն հիմնորոշ առանձնահատկությամբ, ըստ որի և այն ընդգրկվում է սոցիոլոգիայի հետաքրքրության և ուսումնասիրության ոլորտ: Այդ առանձնահատկությունը նրանում չի ներդրվում, կամ նրան չի վերագրվում սոցիոլոգիայի կողմից, որ կարող էր պայմանավորված լինել մեթոդի **ավտոնոմությամբ**, նրա անկախ ու կամայական ընտրությամբ, այլ, ընդհակառակը, սկզբունքորեն հատուկ է առարկայական այդ տիրույթի բնությանը, և հենց իրենով է պայմանավորվում նաև սոցիոլոգիայի բնության առանձնահատկությունը:

Կարելի է նկատել, որ գոյություն ունեցող սահմանումներում **ոչ սկզբունքորեն հետևողականությամբ**, այլ **սուսկ որոշ չափով բացորոշմամբ** ներկա է ուսումնասիրության առարկայի «ինչպիսի ինչ» լինելը, այսինքն՝ թե սկզբունքորեն ինչպիսի բնույթի են այն «ինչ»-երը, որ և անհրաժեշտորեն նշվում են առարկայի բաղադրակազմում: Գոյություն ունեցող սահմանումներում որպես առարկայի ու նրա բաղադրակազմի հիմնորոշ առանձնահատկություն նշվում է այդ ամենի **«սոցիալական»** լինելու բնույթը՝ սոցիալական համակարգեր, սոցիալական իրողություններ, սոցիալական գործընթացներ և այլն: Նկատի ունենալով գոյություն ունեցող սահմանումների և թերությունն ու այդկերպ՝ անկատարությունը, և դրանցում խոնհայուսությամբ ներկա բացասականն ու դրականը, որոնցում և մշտակա, սկզբունքային ան-

¹⁹ Նույն տեղում, էջ 40:

հետևողականությամբ ու միմիայն որոշ չափով ու նույնպես թերությամբ է ներկայում առարկայի բնորոշիչ առանձնահատկությունը՝ «սոցիալականը», աստ՝ կներկայացվեն սոցիալական գիտության առավել կատարելագործված սահմանման բանաձևեր՝ մեկնությամբ հանդերձ:

Հիրավի, արդյոք մարդկային կյանքի ամենայն իրողություններն են, որ որպես իր ուսումնասիրության առարկա նկատի ունի սոցիալական գիտությունը: Մարդկային կյանքի համայն իրողություններում կան այնպիսիք, որ և հիմնարար, գոյացնող, բաղկացնող, էացնող ու այդպերպ՝ հենց **էական** և դրա հետ մեկտեղ՝ կան նաև այնպիսիք, որ և ակցիդենցիալ՝ պատահական, ոչ էացնող ու այդպերպ՝ **ոչ էական**, նշանակություն ունեն մարդկային համատեղ կյանքի որպես այդպիսին գոյության ու ներկատարելագործման համար: Մարդկային իրողությունները որպես «սոցիալական» ներկայանալու ու անվանելու, բնորոշելու ու նույնորոշելու (իդենտիֆիկացնելու) հնարավորություն ընձեռող հիմնական ու հենց առաջնային ատրիբուտը աստ դեռ միայն կանխասացությամբ նշող մտքի բանաձևն ու հենց սահմանումը, որ և սկզբունքորեն ուղենշում ու մերձեցնում է հետագա քննությամբ «սոցիալականի» իսկության առավել չափով ամբողջական հայտորոշմանը, կընդունի հետևյալ տեսքը.

«Սոցիալականը» մարդկային իրողություններն են՝ մարդկային համատեղ կյանքը որպես այդպիսին, սկզբունքորեն անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյականությամբ գոյացնող (էացնող, բաղկացնող) և առ բարեկարգություն ներկատարելագործման հնարավորող, բարենպաստող ու ապահովող:

«Սոցիալականը» ներկայանում է երկբաղադրյալ ու հենց երկմիասնական իր կազմությամբ՝ որպես **տեսականորեն ուսումնասիրության և գործնականորեն ներգործության առարկա:** Արդ՝ «սոցիալականի» երկբաղադրությունն է՝ և՛ **առարկան** սկզբունքորեն կազմող ինչպիսի՞ «ինչը»՝ խնդրո նյութը», և՛ այդ առարկայի հետ մարդկային տեսա-գործնական «ինչ» ու «ինչպես» «անելիքը»՝ **կատարումը**, «խնդրո բանը», որին և հետամուտ է մարդկային տեսա-գործնական գործունեությունը: Եվ «սոցիալականի» երկմիասնությանը՝ առարկային ու կատարումին հիմնացյալ՝ սահմանում են սոցիալական գիտությունները: Ըստ սահմանման տեսության՝ Դավիթ Անհաղթի ուսուցանության, սահմանումը կարող լինել և՛ ըստ առարկայի, և՛ ըստ կատարումի և միասնականորեն՝ ըստ առարկայի ու կատարումի²⁰: Արդ՝ սոցիալական գիտության ինքնահասկացման քննա-խորհրդածությամբ բացորոշ անվանելով, թե «ինչպիսի ինչերն» են դիտվում որպես ուսումնասիրության ենթակա առարկայական ոլորտ, կարելի է ձևակարպել սոցիոլոգիայի սահմանումը՝ ըստ առարկայի (տեսական).

Սոցիոլոգիան սոցիալական Գոյի (գոյերի, իրողությունների, ֆենոմենների) որպես այդպիսին գոյությունն ուսումնասիրող գիտություն է:

Սահմանման մեջ սոցիալական գիտությունների կողմից ուսումնասիրվող «ինչը» և «ինչպիսի ինչը» սոցիալական բնույթի գոյերն են և «սոցիալական Գոյ (գոյեր)»-ի փոխարեն կարելի է գործածել նաև «սոցիալական

20 Տես նույն տեղում, էջ 46:

Ֆենոմեններ կամ իրողություններ» հասկացությունները: Այսկերպ սահմանման բանաձևում թեև սոցիալական գիտության ուսումնասիրության առարկան «ինչ է» հարցադրությանն ի պատասխան՝ անվանված է տարբեր հասկացություններով՝ սոցիալական Գոյ, գոյեր, իրողություններ, ֆենոմեններ, ամենայն այդ հասկացություններով աստ նկատի առնվող բովանդակությունն ու ծավալը նույնն է և հետևաբար դրանք համարժեք են:

4. «Սոցիալականորեն նշանակալի» որպես «սոցիալական գիտության» ուսումնասիրության առարկա

Մակայն արդյոք «**սոցիալական իրողություններ**» հասկացությունը միմիայն իրենով լիովին ու սպառիչ կերպով բովանդակում ու նշում է սոցիալական գիտության ուսումնասիրության առարկայական համընդգրկուն տիրույթը: Վերն արդեն ասվեց, որ նախկինում ու նաև ներկայում գոյություն ունեցող սահմանումներում սկզբունքային հետևողականությամբ չի բացորոշված սոցիալական գիտության և կոնկրետորեն՝ սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկայի «ինչպիսի ինչ» լինելը, քանզի ուսումնասիրության առարկայի բաղադրակազմում հարկ է նշել ն՝ այդ առարկայական տիրույթը հենց միայն իրեն(ց)ով գոյացնող հիմնորոշ բաղադրիչ(ներ)ը՝ ընդհանրացնող հասկացությամբ, ն՝ այն, որ թեև միայն իրենով կան որևէ կերպ, կան էականորեն ու հիմնորոշ չի գոյացնում ուսումնասիրության ենթակա տիրույթը, սակայն առարկայի որպես այդպիսին կայացմանն ու գոյակերպմանը էականորեն ու հիմնորոշաբար մասնակից է իր **ազդեցիկության** կամ **ներգործության նշանակալիությամբ**, իմա՝ «ռելևանտությամբ» (Մ. Վերերի հասկացությունն է²¹): Հարկ է նկատի ունենալ և սահմանման բանաձևում ամրագրել որ սոցիոլոգիան քննության է առնում ոչ միայն **համայն սոցիալական իրականությունը**, այլև առավել լայն ընդգրկում ունեցող **սոցիալականորեն նշանակալի** այլևայլ բնույթի իրողություններ (թե՛ բնական աղետներ՝ գուցե կլիմայական, օրինակ՝ փոթորիկ, տորնադո, ցունամի, հեղեղ, գուցե երկրակառուցվածքային, օրինակ՝ երկրաշարժ, թե՛ մշակութային իրողություններ, օրինակ՝ երաժշտություն, կերպարվեստ, և թե՛ այլ)՝ **իրենց այդ իսկ նշանակալիության տեսակետից**: Ընդ որում, սոցիոլոգիան չի ուսումնասիրում կլիման՝ բացահայտելով նրա բնությունը, ինչն իրագործում է մետեորոլոգիան, և երկրաշարժը՝ երկրակեղևի շերտերի շարժման պատճառների ու օրինաչափությունների բացահայտման տեսանկյունից՝ ինչպես գեոֆիզիկան, և գրականությունը՝ գրականագիտության, կերպարվեստը՝ արվեստաբանության, կամ երաժշտությունը՝ երաժշտագիտության տեսանկյուններից, այլ այդ ամենի սոցիալական նշանակալիությունը, ազդեցիկությունն ու ներգործությունը անձանց, խմբերի, հանրույթի, ազգի, հասարակության ու մարդկության մեջ «**բուն մարդկայինի**»՝ ներքինի ու արտաքինի, այն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնության ու կյանքի (առանձնակեցության ու համակեցության), մշակույթի ու մշակութաստեղծ (որում նաև կենցաղաստեղծ) գործունեության վրա:

«Սոցիալականորեն նշանակալի» են ներկայանում ամենայն իրողույթ-

21 Տե՛ս **Вебер М.**, Объективность социального познания, «Избранные произведения», М., 1990, էջ 360-361:

կատարումն է՝ վերաճել ու դառնալ **իմաստության գիտելիք** և գիտությունը՝ **իմաստության գիտություն**: Արդ՝ մարդկային գիտելիքն իր բուն կոչմանը համապատասխանությամբ՝ մշտապես վերընթանում է իր սկզբունքորեն անհրաժեշտ ու նախընտրելի կատարումին՝ իմաստության գիտելիք և բուն գիտությունը՝ իմաստության գիտություն դառնալուն: Գիտակարգի ոչ [միշտ] խորիմաց և ամենից առաջ՝ դեռ միայն բազմագետ (էրուդիտ) լինելը չէ այն ներկան ու նաև հեռանկարը, որին որպես նախընտրելի կարող էր ձգտել սոցիոլոգիան և-կամ որևէ այլ գիտակարգ: Բազմագետ լինելը կարող է լինել գուցե իսկ անհրաժեշտ և այս առումով՝ որոշակի չափով կայացած սկիզբ ու դեռ միայն **նախազիտություն**, այլ ոչ ամեննին բավարար չափանիշ սոցիալական գիտակարգի նախընտրելի զարգացածության:

Անդրադառնալով սոցիալական գիտությունների և կոնկրետորեն՝ սոցիոլոգիայի և սոցիալական փիլիսոփայության առարկայական տիրույթի ձշգրտման հարցին՝ Է. Գիդենսը նշում է. «...սոցիոլոգիան սեռահիմնային գիտակարգ չէ՝ մարդկային հասարակության համընդգրկուն ուսումնասիրությանն ուղղված, այն ավելի շուտ ներկայանում է որպես սոցիալական գիտության ճյուղ, որն իր ուշադրությունը կենտրոնացնում է արդի կամ «առաջատար» հասարակությունների ուսումնասիրության վրա»²²: Ուստի սոցիալական տեսության ուսումնասիրության առարկայական տիրույթն ավելի լայն է քան սոցիոլոգիայինը: Ըստ Գիդենսի, մասնագիտական գրականության մեջ առկա են սոցիալական տեսության ընկալման և մեկնաբանման մի շարք մոտեցումներ.

«**օրթոդոքսալ կոնսենսուս**» (Գիդենսի տերմինաբանությամբ) – տեսությունն իրենից ներկայացնում է տրամաբանական կուռ կառուցվածք ունեցող, դեդուկտիվ մեթոդի հիման վրա ձևավորված, օրենքների և ընդհանրացումների կառույց,

«**բովանդակային**» – ըստ որի՝ սոցիալական տեսությունները տարբեր բնույթի ընդհանրացումների համալիր են, որոնք ապահովելու են ուսումնասիրվող երևույթների բացատրության գործառնությունը,

հերմենևտիկական – ըստ որի՝ սոցիալական տեսությունները պետք է ապահովեն կոգնիտիվ-կոնցեպտուալ միջոցներ մարդկանց գործողությունների իսկական պատճառների բացահայտման համար:

Իսկ ինքը՝ Գիդենսը, համարում է, որ սոցիալական գիտությունների ուսումնասիրության բուն առարկան սոցիալական համակարգի կառուցվածքային հատկություններն են²³:

Ա. Հոֆմանը սոցիոլոգիայում հայտնի այլ տեսաբաններին համախոհությամբ՝ իբրև սոցիալական գիտությունների և հենց սոցիոլոգիայի ուսումնասիրության օբյեկտ վերստին նշելով «հասարակությունը», իր սահմանման մեջ հայտորոշում է նաև այն որպես այդպիսին կայացնող ու բնորոշելու հնարավորություն ընձեռող գոյաբանական, բարոյական և բուն պրակտեւոլոգիական բաղկացուցիչ հատկությունները: Ըստ նրա, ուսումնասիրության առարկան հասարակությունն է՝ որպես մարդկանց **համատեղ կենսագոր-**

22 Гидденс Э., Устроение общества: очерк теории структуриации, М., «Академический проект», 2005, с. 10.

23 Տե՛ս նույն տեղում, էջ 15:

ծունեության, միավորման, համագործակցության ամբողջություն²⁴:

Այսպիսով, **սոսկ բազմագիտությունը** չի կարող «սոցիոլոգիայի» գիտակարգի ներկայի ու հեռանկարի համար լինել նախընտրելի որակ նաև մեկ այլ առումով: Սոցիալականորեն նշանակալի կարող է լինել ոչ միայն սոցիումի որպես այդպիսին գոյությունը սկզբունքորեն բաղկացնող, էացնող և ուրեմն՝ էականն ու հենց դրականը՝ կոնստրուկտիվն ու կենսարարը, այլև ոչնչացնող, անէացնող ու կազմալուծող բացասականը՝ դեստրուկտիվն ու ոչնչարարը: Այսկերպ որոշարկվելով որպես «սոցիալականորեն նշանակալի»՝ համաշխարհն ու հենց մարդկային կյանքը բաղկացնող ոչ ամենայն և, սակայն, քանակականորեն անվերջ իրողություններ՝ և դեռ միայն որպես սկզբունքային պոտենցիա, և՛ որպես արդեն իսկ իրագործվածություն, ներկայանում են որպես սոցիոլոգիայի հսկայածավալ առարկայական տիրույթը կազմող տարրեր: Այնինչ, անցյալի ու նաև ժամանակակից քաղաքակրթությունների պատմությունից՝ եգիպտական, հունա-հռոմեական, եվրոպական, ասիական, աֆրիկյան և այլ, հայտնի է, որ մարդկային ինքնությունն ունեցել է, պահում է և ունի նաև «սոցիալականորեն նշանակալիություն» դրսևորած այնպիսի փորձառություններ, օրինակ՝ մարդատյացության, դաժանության, մարդու նվաստացման, ներքին բարոյականը ջնջելու և ոչնչացման հայեցակարգեր ու գործեր, դարձնելով դրանք նույնիսկ որպես ուսուցակարգեր, որոնց ուսումնասիրությունը և սոցիոլոգիական քննությունը ոչ մի լավ արդյունքի, մարդկանց կյանքին օգտակար ու պիտանի և նրանց առաքինության, իմաստության ու բարեկարգության ուղղորդել կամ նպաստել չի կարող: **«Սոցիալականորեն նշանակալիություն» ունեցած ոչ ամեն ինչ և ոչ բոլոր եղելություններն են, որ իմաստ ունի և իմաստություն կլինի ի միտ առնել ու գիտենալ:** Չարության զանազանությունների՝ իրենց մանրամասների մեջ երբեմն նույնիսկ գիտենալը, իսկ առավել ևս այդպիսի իմացությանը հետամուտ լինելը կարող է ոչ միայն անպետք, այլև մարդկային հոգեկան կարողություններից ավելին լինել և հետագոտողին, ունկնդրին կամ ընթերցողին հոգեկան խանգարումների ու անդամնալի խախտումների հասցնել:

5. Մշակութորեն կամ հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի իրողությունները որպես «սոցիալական գիտության» ուսումնասիրության առարկա

«Սոցիալականորեն նշանակալի» իրողությունների այդ իսկ նշանակալիությամբ գոյության համընդգրկուն տիրույթը հենց մարդկային ինքնության որպես այդպիսին առանձնակեցության ու համակեցության և մշակույթի նկատմամբ նշանակալիությամբ որոշարկված իրողությունների ու գործերի գոյությունն է: Հիրավի, «սոցիոլոգիան բազմազբաղ գիտական գործունեություն է, և իր հետազոտությունների ոլորտում ընդգրկում է մշակութորեն նշանակալի հումանիտար և սոցիալական ֆենոմենների հսկայածավալ բազմություն ու ամբողջություն»²⁵: Մարդկային կյանքի

24 Տե՛ս Гофман А.Б., Семь лекций по истории социологии, учебное пособие, 9-е изд., М., КДУ, 2008, էջ 7:

25 Ջիջյան Ա., Քոչարյան Ռ., Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և քրիստոնեական

ամենայն իրողություններ, որոնք ունեն պոտենցիա և-կամ արդեն նաև կայացում՝ մարդկային հետաքրքրության ու քննության մեջ ներառվելու որպես «սոցիալականորեն», կամ «մշակութային», կամ «քաղաքակրթորեն» նշանակալի, ընդգրկվում են սոցիալական գիտությունների ուսումնասիրության առարկայական տիրույթներում: Մ. Վեբերի աշխատություններից մեկում արտահայտված մտքերում ներանշակորեն (իմպլիցիտ) բովանդակյալ է սոցիոլոգիայի՝ ըստ առարկայի սահմանման մեկ այլ բանաձև, որում առարկայի «ինչպիսի ինչ» լինելը հասկացության այլերպ անվանումով բացորոշված է որպես «մշակութային նշանակալի»՝ «կենսական երևույթներ» կամ «մարդկային կյանքի իրադարձություններ»: Նա «սոցիալական գիտության» մասին խոսում է, այն դիտելով մշակույթի մասին գիտությունների» կատեգորիայի մեջ. «Մենք «մշակույթի մասին գիտություններ» ենք անվանում այն գիտակարգերը, որոնք ձգտում են ճանաչել կենսական երևույթներն իրենց մշակութային նշանակության մեջ»²⁶: Իսկ մինչ այդ՝ նույն հարցի վերաբերյալ ասում է հետևյալը. «Եթե «մշակույթի մասին գիտություններ» անվանենք այն գիտակարգերը, որոնք մարդկային կյանքի իրադարձությունները քննության են առնում իրենց մշակութային նշանակության տեսանկյունից, ապա սոցիալական գիտությունը մեր հասկացմամբ այդ կատեգորիայի մեջ է մտնում»²⁷: Արդ՝ սոցիալական գիտության կամ սոցիոլոգիայի վերերյան սահմանումը՝ ըստ առարկայի (նույնպես տեսական), անշուշտ, նորովի վերաձևակերմամբ՝ կներկայանա մտքի հետևյալ բանաձևով.

Սոցիոլոգիան մշակութային նշանակալի մարդկային կյանքի իրողություններն ուսումնասիրող գիտություն է:

Նույն աշխատության մեջ Մ. Վեբերի արտահայտած մեկ այլ մտքում կարելի է նկատել սոցիալական գիտության կամ հենց սոցիոլոգիայի առավել բացորոշ ձևակերպված սահմանում.

Սոցիալական գիտությունը (այստեղ նույնն է, թե ասել՝ սոցիոլոգիան) գիտություն է իրականության մասին և ձգտում է հասկանալ մեզ շրջապատող իրական կյանքն իր յուրակերպության մեջ՝ նրա առանձին երևույթների, իրենց այժմյան կերպի մեջ, փոխկապակցությունն ու մշակութային նշանակալիությունը, ինչպես նաև դրանց հենց այդպես, այլ ոչ այլ կերպ պատմականորեն կայացման պատճառները»²⁸:

Նկատենք, որ սոցիալական գիտության ուսումնասիրության առարկայի «ինչպիսի ինչ է» հարցադրությանն ի պատասխան բնորոշումը՝ որպես «մշակութային նշանակալի», ունի առավել չափով բովանդակալիություն ու կողմնորոշիչ իմաստ, քան «սոցիալական կամ սոցիալականորեն նշանակալի» հասկացությունը: Թեև «մշակութային նշանակալի» և «սոցիալական

կենսակերպի արմատավորումը, Եր., ԴԱԼԼ հրատարակչություն, 2009, էջ 183:

²⁶ Вебер М., Объективность социального познания, «Избранные произведения», М, 1990, с. 373-374.

²⁷ Նույն տեղում, էջ 364:

Սոցիալական հետազոտության ու գիտության համար էական՝ «օբյեկտ», «նպատակ», «սոցիալական ու մշակութային նշանակալիություն», «արժեքային կողմնորոշում», «կաուզալ նշանակություն», «աղեկվատ պատճառ», «ալտերնատիվ ու օբյեկտիվ հնարավորություն» վերերյան հասկացությունների վերաբերյալ՝ Մաքս Վեբերի «հասկացողական սոցիոլոգիայի» հայեցակարգի մեթոդաբանության վերլուծությունն ու մեկնաբանությունը տես Джиджян А. Р., Кочарян Р. Х., «Понимающая» методология социальных наук М. Вебера, «Философия» 21-րդ դարի շեմին», Եր., 1998, էջ 58-64:

²⁸ Տես Вебер М., Объективность социального познания, «Избранные произведения», М, 1990, էջ 369:

կամ սոցիալականորեն նշանակալի» բնորոշումների դեպքում ուսումնասիրության առարկայական տիրույթների միջև տեսնվում են նաև ընդհանրություններ: Այն, ինչ ասվեց «սոցիալականի» և «սոցիալականորեն նշանակալի» վերաբերյալ, արդյոք, նույնականորեն չի վերաբերում նաև «մշակութային նշանակալիին»: Արդյոք, «մշակութային նշանակալին» չունի «սոցիալական» ու «սոցիալականորեն նշանակալի» հետ նույն ընդգրկումը, չէ՞ որ մշակութային ամենալայն ընդգրկմամբ ու ըմբռնմամբ՝ ըստ մարդկային կարողության, ամենայն մտակերտը, հոգեկերտը և ձեռակերտն է, այդ թվում՝ վերոնշյալ ոչնչարար հայեցակարգերն ու գործիք-միջոցները:

Իրոք, այն, ինչն անվանում ենք մշակույթ, ունի լայն ընդգրկում և նրանում ներկա են ոչ միայն մարդկային ինքնության որպես այդպիսին գոյության ու այլոց հետ գոյակցության առումով կենարարը և այս առումով՝ դրականը, կոնստրուկտիվ-ստեղծարարը, այլև ինքնության նկատմամբ ներքին ու արտաքին ոչնչարարը, կորստյան մատնողը և այս առումով՝ բացասականը, դեստրուկտիվը, ստեղծագործական բարի կենսականությունն ընդարմացնողն ու կապանքողը: Մ. Վեբերը գրում է. «Մշակույթի ֆենոմեններին պոռնկությունը վերաբերում է ոչ քիչ չափով, քան կրոնը կամ փողը, և բոլոր դրանք վերաբերում են այն պատճառով, **միայն** այն պատճառով, որ դրանց գոյությունն ու ձևը, որ դրանք ձեռք են բերել **պատմականորեն**, ուղղակի կամ անուղղակի ներագդելով՝ առնչվում են մեր մշակութային հետաքրքրություններին»²⁹: Հիրավի, անբարոյականության այլևայլ դրսևորումները նույնպես հայտնացույց են անում հասարակության մշակութային իրավիճակը՝ հոգևոր-քաղաքակրթական ինքնության ու կյանքի հոգևորության տկարությունն ու դեստրուկցիան: Եվ կարելի է նկատել, որ Մ. Վեբերը մշակույթ է անվանում այն ամենը, ինչը ստեղծել է մարդը իր հոգևորության տարատեսակ ու հենց տարընթաց՝ և առաքինություններով ներկատարելագործվող, զորացող ու առավելացող **վերընթացության**, և առաքինություններին հակադարձ մեղքերի ու արատների մեջ սայթաքող ու հաստատվող մարդկային հոգու տկարությամբ իսկ՝ կազմաքանդվող ու նվազող **վարընթացության** հակումներով: Նա մշակույթ է անվանում մարդկային ինքնության, կյանքի ու նաև հենց մշակույթի նկատմամբ և հոգևորությամբ բարենշանակ կոնստրուկտիվը, և անհոգևորությամբ դեստրուկտիվն ու ոչնչարարը՝ սկզբունքորեն չտարբերակելով **մշակույթն** ու **անմշակույթը**: Քանզի նա սոցիալական գիտության ու հենց գիտականության համար սկզբունքային է համարում գերծ մնալ արժեքային կողմնորոշումներից ու գնահատականից և արդյունքում չի նկատում, որ ճշմարիտ արժեքայինն ու արժեքային գնահատականը սկզբունքորեն ոչ թե դրսևորումն ու հայտորոշողն են կողմնակալության, կանխակալության, որ և խեղաթյուրում ու ճշմարտությունից շեղում են գիտական դատողությունը, այլ՝ միմիայն անվանում, նույնորոշում (իդենտիֆիկացում) ու իմացահայտում են մարդկային հոգեմարմնավոր ինքնությանը, կյանքին ու մշակույթին իսկորեն **հոգեկեցույցն ու կենարարը** և այդ իսկ առումով՝ նույն այդ ամենի **ներկատարելագործմամբ**՝ իրենց բնությունների առանձնահատկություններում՝ **առ բարեկարգություն ուղենպաստն ու բարենշանակորեն կոնստրուկտիվը**: Եվ կա-

²⁹ Նույն տեղում, էջ 379.

րելի է նկատել, որ սոցիալական գիտության առարկայի «ինչպիսի ինչի» վերերյան այդկերպ բացորոշումը որպես «մշակութային նշանակալի», ինչպես և «սոցիալականորեն նշանակալիի կամ սոցիալականի» դեպքում, ունի նույն ծավալուն ընդգրկումը և դեռ միայն այդկերպ սահմանմամբ՝ սոցիալական գիտությանը և կոնկրետորեն սոցիոլոգիային կարող է նույնաբար ուղղորդել գանազանակերպ որակականություն ունեցող իրողությունների ընդգրկմանը:

Ընդամին, վերերյան երկրորդ սահմանումից նկատելի՝ իրողությունների պատմական հետազոտությամբ ու պատճառիմացությամբ հանդերձ, սոսկ բազմագիտության ու վերստին նախագիտության, այլ ոչ՝ խորիմաց ու հենց խորհրդիմաց՝ իր առարկայի (նախ)ընտրությամբ ու (բարե)կատարումով իմաստնացող ու հենց իմաստնացյալ՝ բուն իմաստության գիտության:

Փորձելով հաղթահարել «մշակույթ» և ուրեմն նաև «մշակութային նշանակալի» հասկացությունների բովանդակության առնչությամբ վերոնշյալ թերությունը՝ կարելի է բացորոշել մշակույթի ոգենյութեղեն երկբաղադրյալ բնությունը և արդեն ըստ այդմ՝ սահմանել սոցիալական գիտությունը: **Մշակույթը նյութեղենի ու նաև կենսականի կերպավորումն է՝ ըստ իմաստի ու գուտ հոգևորի (կամ ոգեղենի):**

Սոցիալական գիտության ու հենց սոցիոլոգիայի սահմանում՝ ըստ առարկայի (տեսական).

Սոցիոլոգիան մարդկային (որում և՛ ամենայն ազգերի, ժողովուրդների, հասարակությունների ու կոնկրետորեն նաև հայոց) ինքնության ու կյանքի՝ մշակույթով կերպացյալ ու հոգևոր առումով նշանակալի նախկին կամ ներկա եղելությունն ու ապագա լինելիությունը և հենց այդ նշանակալիության որպիսությունն ուսումնասիրող գիտություն է:

Հնարավոր է նաև ամրագրել սոցիալական գիտության սահմանման հիմնականում նույն բովանդակության այլկերպ բանաձև.

Սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային ու կոնկրետորեն նաև հայ ազգի ինքնության և բազմաբովանդակ կենսակերպի՝ հաստատում ու մշակութային կերպավորում ստացած անցյալի, ներկայի ու նաև հնարավոր հետագա որպիսության՝ պատճառներով հանդերձ եղելությունն ու նաև լինել(ի)ությունը բացահայտող:

Սահմանման այս բանաձևերում ևս ներկա է սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկայի բովանդակության ու համընդգրկուն ծավալի ճշտիմաց մեկնահայտում ու նույնորոշում և սոցիոլոգիան վերստին ներկայանում է որպես բազմազետ գիտակարգ: Կարելի է նկատել, որ աստ ևս «մշակույթը» և «հոգևորը» կարող են ներկայանալ ամենալայն ընդգրկմամբ՝ և հոգենպաստ, հոգեկեցույց ու կենարար, և հոգեկործան, կենսասպան ու ոչնչարար իմաստներով ու իրողություններով:

Նկատելի է, որ սահմանումները ձևակերպելով դեռ միայն ըստ առարկայի և բացորոշելով՝ առարկայի «ինչպիսի ինչը» առանց սկզբունքորն առնչելու «ինչի համար է» հարցի հետ և առանց ըստ այդմ՝ ճշտորոշելու առարկայի բնությունն ու այդկերպ նաև հայտնացուցելու իր ուսումնասիրության առարկայի ընտրության ճշտիմացությունը, ամբողջական և այնպիսին չեն, ինչպես անհրաժեշտորեն ու նաև նախընտրելիորեն պիտոյական է, որ լի-

ներին: Սահմանումներում ստույգ բացորոշմամբ ներկա է դեռ միայն անհրաժեշտը և ոչ ամենևին բավարարը, որոնց միասնական ներկայությամբ միայն սոցիոլոգիան որպես գիտություն կսահմանվեր իր բուն կոչմանը համապատասխան իսկությամբ, իմաստով ու իմաստության խորհուրդով և սահմանման մեջ որպես գիտություն կներկայանար, իր իսկության ու խորհուրդի մեջ կկայանար իրեն որպես այդպիսին էացնող ու իսկական գոյությամբ հաստող³⁰ բաղկացուցիչ զանազանություններով:

Սոցիալական և-կամ մշակութորեն նշանակալի «կենսական երևոյթներ» զանազան տարատեսակային բազմաքանակությունը չէ, որ դառնալով ուսումնասիրության առարկայական տիրույթ, հաստում ու կայացնում է սոցիալական գիտությունը և կոնկրետորեն՝ սոցիոլոգիան իր բուն կոչմանը համապատասխան գիտական կարգավիճակի մեջ: **Իրողությունների բազմաքանակության ուսումնասիրությամբ և բազմազետ դառնալով չէ, որ սոցիոլոգիան ճշմարիտ իր կոչումի ու իր իսկության մեջ է հաստատվում և դառնում իսկը գիտություն:** Սոցիալական գիտությունը և կոնկրետորեն սոցիալական իմաստասիրությունն ու սոցիոլոգիան իրենց ներսում՝ և՛ համայն մարդկային կյանքի **հասկացման**, և՛ իրենց իսկ **ինքնահասկացման** մեջ պետք է ունենան սեփական **առարկայի ընտրության** ու նաև **հայեցակարգի բացության** ու քննախորհրդածության **մեթոդական ու մեթոդաբանական ուղու** ընտրության առումներով իրենց **ներկատարելագործող ու իմաստնացնող** սկզբունքային միտում: Եվ սոցիալական գիտության իմաստնացման ամբողջական միտումը իրագործվում է **երկու բաղադրիչով**, առաջին՝ իր ուսումնասիրության ենթակա մարդկային կյանքի իրողությունների ադեկվատ ընտրությամբ՝ որպես **առարկա** և երկրորդ՝ թե ինչպիսին է գիտակարգի **կատարումը**, որ և սահմանման առնչությամբ կանխասացությամբ մեկնորոշվեց, թե՛ ի՞նչ է «անում» տվյալ իմացակարգը այդ իրողությունների հետ (իմա՝ ինչպիսին է իմացակարգի բուն «անելիքը») իր ուսումնասիրության առարկայական տիրույթի նկատմամբ:

Առաջին բաղադրիչի՝ առարկայի վերաբերյալ ասվեց, որ իրողություններն ընտրվում են «մշակութորեն նշանակալի» պրիզմայով: Կարելի է, արդյոք, այսպիսի ընտրությամբ, երբ ուսումնասիրության ոլորտ են ընդգրկվում մշակութորեն նշանակալի «ինչերը», տեսանել իմաստության միտումի ներկայություն: Այս հարցին համահունչ է նաև հետևյալ հարցը. ինչպե՞ս կարելի է հասկանալ վերաբերյալ այն միտքը, թե «ինչպիսի ինչի» բացորոշումը որպես «մշակութորեն նշանակալի»՝ առավել իմաստային լիցք, իմաստնացնող և կողմնորոշող պոտենցիա կարող է ունենալ սոցիոլոգիայի համար: Չէ՞ որ ասվեց նաև, որ «մշակութորեն նշանակալի», ինչպես և «սոցիալականի» դեպքում ուսումնասիրության ենթակա իրողությունների մեջ կարող է լինել նաև բացասականը, դեստրուկտիվն ու ոչնչարարը, նույնն է թե ասել՝ անիմաստությունը:

Իրոք, «մշակութորեն նշանակալի» հատկորոշվող իրողությունների կամ երևոյթների ընդգրկումը կարող է լինել նույնչափ լայն, որքան և «սոցիալական նշանակալի» պարագայում: Բայց և ամրագրենք, որ ուսումնասիրության առարկայական ոլորտի վերաբերյալ «ինչպիսի ինչ է» հարցին ասե-

30 Հաստող – այստեղ՝ արարող, ստեղծող, կայացնող, հիմնող, գործող:

լով՝ «մշակութային նշանակալի», նկատի է առնվում ու ընդգրկվում ոչ միայն նշված ընդարձակ տիրույթը, այլև **սոցիումի համար իսկնիսկ կրթականորեն նշանակալիություն ու այդ կրթությամբ առավել բարեկարգ գոյության մեջ հաստատելու պոտենցիա ունեցող իրողությունները**: Մշակույթի գոյությունը, եթե սոցիումի մեջ չի իրականանում սոսկ որպես առկա ունեցվածք և այսչափ միայն ձեռքբերում, այլ՝ յուրացվում է և ունենում մարդկային ինքնության գոյությունը որպես այդպիսին ներկատարելագործող ներկայություն՝ կայացնելով քաղաքակիրթ՝ հոգով ու բարքով կիրթ և ուսյալ հասարակություն, **իր այդկերպ դիտավորության ու կատարումի մեջ է իսկորեն մշակույթ** ու նշանակալի ձեռքբերում, հաստատվելով ոչ այլևս անիմաստացած և ունայն, այլ՝ իր բուն իսկությունն ունեցող, ուստի և **իսկական գոյության, կնշանակի՝ մարդկային ինքնության նկատմամբ հոգե- և կենսասներգործուն իմաստի ու հենց իմաստնացնող ներկայության մեջ**:

Իհարկե, այն ինչ ասվեց «մշակութային նշանակալի» մասին, կարող է վերաբերել նաև **կրթականորեն նշանակալի** նրա ներկայությանը, այսինքն՝ կրթական է և սկզբունքորեն կարող է նրանում նկատի առնվել ու ընդգրկվել կրթականորեն վնասարարն ու ոչնչարարը, այդ իմաստով իրագործելով կրթականության իր պոտենցիան և բացահայտելով իր նշանակալիությունը: Ի վերջո, կրթական կարող է լինել նաև չարությունը, մարդկային ինքնությունը «կրթելով» դեպի չարամտություն, չարախոսություն ու չարագործություն, միով բանիվ՝ դեպի չարակեցություն և հենց անբարի կյանք ու անիմաստություն: Ահավասիկ, բարեկարգությունից շեղ ու սայթաք ընթացքի կրթականություն նկատել տվող ֆենոմենների **չափավորությամբ** ուսումնասիրությունը՝ թե՛ բազմայլ բոլոր կերպերի ու մանրամասների հետամուտ հետաքրքրասիրության ու իմացության մոլությանը ներքուստ չտրվելը, թե՛ դրանց ներգործությունից խուսափելը և, այդպիսով, նախընտրելի կրթականության առումով նշանակալի իրողությունների, երևույթների ընդգրկումը, երկուստեք իրականանալի է **ընտրությամբ**: Սոցիոլոգիայի կողմից իր ուսումնասիրության առարկայական տիրույթի ընտրության խնդրակարգում «մշակութային նշանակալի» ընդգրկողականությունից սկզբունքորեն **բարեկարգության միտող կրթականության ընտրությունը** իրագործելը կարող է բացահայտելի դարձնել **սոցիումի գոյության մեջ ներքին բարոյականությամբ, մշակույթի յուրացվող ներկայությամբ ինքնամաքվող ու կատարելագործվող կենսարարության իմաստով մշակութային ներգործուն նշանակալիություն**:

Երկրորդ բաղադրիչի՝ կատարումի վերաբերյալ սահմանման առնչությամբ կանխասացությամբ նշվեց, որ այն սոցիալական գիտության և կոնկրետորեն՝ սոցիոլոգիայի «անելիքն» է, թե՛ ինչ է անում գիտակարգը իր գիտական գործունեությանը ենթակա՝ «խնդրո նյութ» իրողությունների կամ երևույթների հետ: Եվ այս բաղադրիչը վերաբերում է սոցիալական գիտության ոչ միայն **տեսական-ձանաչողական**, այլև նրա՝ այս աշխարհին ու հենց մարդկային կյանքին ներգործունորեն մասնակից և այդկերպ՝ բուն **կենսագործնական** գործառույթներին:

Սոցիալական գիտության և աստ կոնկրետորեն սոցիալական իմաստա-

սիրության ու սոցիոլոգիայի որպես այդպիսին գոյության իսկությունը հարցադրելով՝ էական է այժմյան իրականությունում սոցիոլոգիայի որպիսությունը նաև համեմատել նրա բուն կոչմանը համապատասխան՝ անհրաժեշտ ու նախընտրելի գոյության իսկության հետ: Արդ, սոցիոլոգիայի անհրաժեշտ ու նախընտրելի գոյության իսկության առանձնահատկությունը հասկանալ և բացորոշել ձգտող մտորումների համար նախնական կարող է լինել հետևյալ հարցը. սոցիոլոգիան որպես գիտություն և հենց իմաստասիրություն՝ տեսական էր, թե՛ գործնական: Ունի՞ արդյոք, սոցիոլոգիան տեսական և գործնական գործություն (պոտենցիա): Իր ժամանակակից, այժմյան ներկայության մեջ, իր գոյության ներկայող կերպում սոցիոլոգիայի ո՞ր պոտենցիան և գործառույթն է գերակշռում՝ տեսական, թե՛ գործնական: Սոցիոլոգիայի գոյության որպիսության հասկացումն ու մեկնողաբար բացահայտումը առաջնային այս հարցադրումների տեսակետից կարող է նախնականորեն տեսանել տալ սոցիոլոգիայի իսկության, կնշանակի նաև գոյության իմաստի առանձնահատկությունը:

Սոցիալական գիտության սահմանումը՝ ըստ առարկայի (տեսական) ճշտիմաց բանաձևելու համար էական է սկզբունքորեն ու նախնականորեն ի մտի ունենալ գիտակարգի տեսա-ձանաչողական գործառույթի առնչակցությունը նրա գործնական գործառույթին՝ կատարումին, որում և քննահասկացմամբ մեկնահայտ բացորոշությամբ ներկա է պատասխանը «ինչի՞ համար է սոցիալական գիտությունը» հարցին և որով նաև հայտնացույց է իր ուսումնասիրության **առարկայի ընտրության ստուգությունը՝ անհրաժեշտությունն ու նախընտրելիությունը:**

Այդկերպ հետևողական ու ներկարգավորությամբ ամբողջական ու հենց միասնական մոտեցում՝ մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի որպիսության խնդրակարգում հետամուտ գոյութենական ու նպատակաբանական մեկ-միասնական ճմարտության բացահայտմանը կարելի է նկատել Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում, որից և ուսանելով³¹ կարելի է ամրագրել սոցիալական գիտության և աստ կոնկրետ՝ սոցիալական իմաստասիրության կամ սոցիոլոգիայի նաև այլ սահմանումներ՝ ըստ առարկայի (տեսական)։

Սոցիոլոգիան կյանքի նախկին և երբեմն նաև ներկայում դեռ շարունակական եղելումի մշակութորեն նշանակալի բարեկարգության առավելության կամ նվազության, իրադարձությունների ու գործերի «ինչ», «ինչպիսի՞ ինչ» ու «ինչպե՞ս» գոյությունը՝ պատճառով հանդերձ, ուսումնասիրող գիտություն է:

Այն ամենը, ինչը որպես մարդկային բազմաբովանդակ կյանքի ատրիբուտներ՝ նշում ենք, ասելով՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավական, ... և մեկնորոշելով՝ ի մի բերում ու կոչում՝ մշակութային, միով բանիվ՝ կարելի է նաև կոչել **քաղաքակրթական:** Որպես նախընտրելի օրինակ կարելի է նկատել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում այսկերպ միաբերող բնորոշմամբ ընդգրկվող՝ **քաղաքակրթորեն նշանակալի** առավելություն կամ նվազություն ցուցանող՝ հայոց ինքնության ու

31 Տե՛ս **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինգտոն», Եր., 2016, էջ 532:

կյանքի կարգավորությունը, իրադարձություններն ու գործերը: Նրա պատմահայեցակարգի առնչությամբ այդ հասկացության գործածությունը և վերանվանումը իր երկի բուն ասելիքին համապատասխանությամբ որպես **«հոգևոր-քաղաքակրթական պատմագիտական հայեցակարգ»**, ճշմարտորեն արդարաբան և օրինավոր է, քանզի իր երկի ողջ շարադրանքում Հայոց Պատմահայրը բազմիցս՝ նախնայաց ու նաև ներկայի բովանդակ կենցաղավարության բարեկարգության և-կամ անբարեկարգության գործերի վերաբերյալ իր դրվագապատումներում ու հենց «Ողբ»-ում, ընթերցող մտքին «յանդիման է կացուցանում» հայոց բովանդակ կյանքը բնորոշող հոգևոր-քաղաքակրթական որպիսության առանձնահատկությունները: Նկատի ունենալով վերոասացյալը և ուսանելով Մովսես Խորենացու հայեցակարգից՝ մարդկային կյանքն ուսումնասիրող գիտությունում որպես առարկա ընտրել **հոգևոր-քաղաքակրթականորեն նշանակալի** և ուրեմն՝ մարդկային ներքին ու արտաքին կյանքն **իմաստնացնող**, առաքինուսույց և հենց բարեկարգող նշանակալիություն ունեցող իրողությունները, սոցիալական գիտության վերորբերյալ սահմանումներում «մշակութային նշանակալի»-ն կարելի է վերածնակերպել՝ «հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի»: Ուրեմն՝ **սոցիոլոգիան կյանքի նախկին ու երբեմն դեռ շարունակական եղելումի, ներկայի ու նաև ապագայի լինել(ի)ության հոգևոր-քաղաքակրթականորեն բարեկարգության առավելությունը և-կամ նվազությունը՝ պատճառով ու հետևանքային նշանակալիությամբ հանդերձ ուսումնասիրող գիտություն է:**

Ամփոփում

Այնուամենայնիվ, մարդկային բազմաբովանդակ կյանքի ատրիբուտները միաժողովելով «մշակութային» կամ «քաղաքակրթական» անվան ներքո, չի լուծվում խնդիրն առավել խորությամբ քննության հետևողականորեն ուղղորդող այն հարցը, թե՛ «մշակութային, կամ քաղաքակրթորեն նշանակալի» կյանքի բազմաբովանդակ եղելումի ատրիբուտներում ո՞ր բաղադրիչն է, որ անհրաժեշտ է դիտել որպես հիմնորոշ ու գերակա և նախընտրելի՝ մարդկային ինքնությունը, կյանքն ու ստեղծարար գործունեությունը հատկորոշող, և հենց **այդուեսակ** կարգավորության առավելությունն ու նվազությունը, իրադարձություններն ու դեպքերն ընդգրկել սոցիալական գիտության ուսումնասիրության առարկայում: Աստ՝ կարելի է որպես անհրաժեշտ ու նախընտրելի օրինակ նշել հենց Մովսես Խորենացու ընտրությունը: Նա «մարդկային բազմաբովանդակ կյանքի քաղաքակրթորեն, ռազմականորեն, մշակութային, տնտեսականորեն, իրավականորեն ... նշանակալի եղելումն ընդգրկելով պատմության ուսումնասիրության առարկայում, այդ ամենում հիմնարար ու որոշիչ է դիտում՝ հասկանալ, մեկնողաբար բացորոշմամբ՝ «ի պատմութիւնս հիւսել» **հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի կարգավորության, իրադարձությունների ու գործերի՝ բարոյականորեն ու հենց առաքինորեն** առավելության կամ նվազության իսկությունը իրենցում և-կամ իրենցով ցուցանող իմաստները, որոնցում և՛

ինաստության խորհուրդները»³²:

Ըստ այդմ՝ կարելի է ամրագրել սոցիալական գիտության առավել կատարելագործված սահմանում՝ ըստ առարկայի «ինչպիսի ինչ» լինելու առավելաչափ բացորոշ մեկնահայտման (տեսական)։

Սոցիոլոգիան մարդկային, որում և (ամենայն ազգերի ու ժողովուրդների, հասարակությունների) կոնկրետորեն հայոց, ինքնության, կյանքի ու մշակույթի կարգավորության, իրադարձությունների ու գործերի՝ բարոյականորեն ու հենց առաքինորեն առավելության կամ նվազության որպիսությունն ուսումնասիրող գիտություն է:

Ռոմիկ Խ. Քոչարյան – հերմենևտիկայի տեսություն, պատմություն ու կիրառություն, տեսական և գործնական փիլիսոփայություն, պատմության փիլիսոփայություն, սոցիոլոգիայի պատմություն, տեսություն ու մեթոդաբանություն, աստվածաբանություն:

kocharyan.romik@mail.ru

Անահիտ Ռ. Զիջյան – սոցիոլոգիայի պատմություն, տեսություն և մեթոդաբանություն, կոնֆլիկտի սոցիոլոգիա, սոցիալական աշխատանքի պատմություն, տեսություն և պրակտիկա:

jijyan@mail.ru

32 Նույն տեղում, էջ 533:

Summary

THE DEFINITION OF THE SOCIAL SCIENCE BASED ON THE SUBJECT

Romik Kh. Qocharyan
Anahit R. Jijyan

Key words – social, social science, socially significant, object, need, truth.

The purpose of this research is to reveal the truth-of-being of social science by hermeneutic methodology, perception, critical analysis, and interpretation of the theoretical and practical aspects and components of the whole unity truth of the essence of the “social science”. The queries of this study are, first, “What is social science as **being**?” or “How does the social science **exist**?”, second, “What is the social science as **entity**?”, third, “How is the social science **working**?”, and, fourth, “For what is social science?”. By the suggested queries of the article in the sphere of scientific and particularly social-scientific thought **once more** the interesting problems are introduced: to investigate the inner connection of “**wisdom**” and “**science**”, in this particular case, of “**wisdom**” and “**social science**”. As a result of such research approach in scientific knowledge and, namely, in the “social science” appears the possibility to present explicitly the **counsel of wisdom. Social science, as such, is called to have openness of its being and hence to the truth of its existence, namely the need and intention to improve social life.** Social science in its truth and perspective being chooses and investigates events and deeds by which it is possible to express **the genuinely necessary and preferable things** in human deeds for constructing good-orderly human life. **Understanding and to interpreting counsels of wisdom contained in socially-significant events and deeds of human life is the true calling of social science that was originally inherent to it. The calling of social science addressed to contemporaries and descendants is identical to the calling of reading social-scientific investigation: to reach and comprehend the wisdom of spiritual-civilized identity, life and culture of human community: in past, present and possible perspective future.** The nature of social science or the truth of being-of-social science as such is revealed in the definition of social science. And in this article by revealing and summing up the essential and preferable features of social science through formulas of thought the definitions of social science by its subject are presented.

ОПРЕДЕЛЕНИЕ СОЦИАЛЬНОЙ НАУКИ ПО ЕЕ ОБЪЕКТУ

Ромик Х. Кочарян
Анаит Р. Джиджян

Ключевые слова – социальное, социальные науки, социально значимое, объект, нужда, истина.

Целью настоящего исследования является раскрытие «истины бытия» социальной науки посредством герменевтической методологии. Представлены понимание, критический анализ и интерпретация теоретического и практического аспектов и составляющих единой истины бытия «социальной науки». Проблематикой и вопрошанием этого исследования являются следующие вопросы: во-первых, «Каково бытие социальной науки?», во-вторых, «Что есть социальная наука как сущее?», в-третьих, «Какова социальная наука?», и, в-четвертых, «Для чего социальная наука?». Посредством предложенного в статье вопрошания и в саму сферу общенаучных и конкретно социально-научных размышлений **вновь** вводится интересная проблематика – исследовать внутреннюю связь «**мудрости**» и «**науки**», в данном конкретном случае – «**мудрости**» и «**социальной науки**». В результате такого исследовательского подхода в научном знании и, в частности, в «социальной науке» появляется возможность эксплицитно представить **заветы мудрости**. Социальная наука как таковая призвана к открытости своего бытия и тем самым – к истине своего существования нуждою, потребностью и намерением благоустройства общественной жизни. **Раскрыть мудрость, содержащуюся в событиях человеческой жизни – это и есть само призвание социальной науки**, что и было изначально присуще предшествующим современной социологии метафизическим в своих основаниях социальным теориям. **Призвание не только самой социальной науки, адресованной современникам и потомкам, но и прочтения социально-научного исследования тождественно и понимается как постижение мудрости духовно-цивилизованной самости, жизни и культуры человеческого сообщества в прошлом, настоящем и возможном в перспективе.** Природа социальной науки, ее сущность и само естество, по сути, истина бытия социальной науки как таковой раскрываются в её определении. Посему, раскрывая существенные свойства социальной науки и подытоживая полученные результаты, давая интерпретации, в статье формулируются определения социальной науки по объекту её исследования.

ՀԻՄՆԱԳԻՆՆԵՐ

ԺՄՄԻՆԱԳԻՆՆԵՐ, 2018
ԺՄՄԻՆԱԳԻՆՆԵՐ, ԵՐԿՐ 3 (63), ԽԱՄԻՆԱԳԻՆՆԵՐ

ՀԻՄՆԱԳԻՆՆԵՐ

REFERENCES

1. **David Anhaxt**, Sahmanq imastasirutean – Erkkosutyunq imastasirutean, Yer., 1980, (in Armenian).
2. **Yndarcak bararan anglerene – hayerene**, ashxatasirutyamb prof. J. J. Chagmagtchean, Boston, 1922, (in Armenian).
3. **Jijyan A.**, «Hogatsutyune» vorpes universal intencia u himq sociologiayi ev socialakan ashxatanqi poxhaxordakcutyan // «Philisophayutune ardi ashxarhum», girq IV, Yer., 2014, 136–147, (in Armenian).
4. **Jijyan A., Qocharyan R.**, Socialakan ashxatanqy, baregorcutyuny ev «qristoneakan kensakerpi armatavorumy», Yer., 2009, (in Armenian).
5. **Kocharyan R.**, Hans-Georg Gadameri philisophayakan hermenevtikan, Yer., 2006, (in Armenian).
6. **Kocharyan R.**, Patmutyuny ev hermenevtikan, girq 1, Movses Khorenatcu patmagitakan hayecakargy, Yer., 2016 (in Armenian).
7. **Veber M.**, Ob'ektivnost' social'nogo poznanie – Izbrannye proizvedenia, M., 1990, (in Russian)
8. **Giddens A.**, Ustroenie obshestva: ocherk teorii strukturacii, M., 2005, (in Russian).
9. **Gofman A.B.**, Sem' lekci po istorii sociologii, uch.posobie, 9 izd., M., 2008, (in Russian).
10. **Davydov Yu. N.**, Istorija teoreticheskoy sociologii, v 4 t., M., 2002, (in Russian).
11. **Jijyan A. R., Kocharyan R. Kh.**, Ponimayushaya metodologiya social'nix nauk M. Vebera // Philisophayutyun@ Hayastanum 21-rd dari shemin, Yer., 1998, (in Russian).
12. **Merton R.**, Social'naya teoria i social'naya struktura, M., 2006, (in Russian).
13. **Pakhar' L.I.**, K voprosu o kategorial'nom apparate social'noy filosofii // Uchenye zapiski Orlovskogo gosudarstvennogo universiteta, N 4(54), 2013, (in Russian).
14. **Heidegger M.**, Bytie i vreme., M., 1997, (in Russian).
15. **Heidegger M.**, Issledovatel'skaya rabota Wilhelm Dilthey'a i bor'ba za istoricheskoe mirovozzrenie v nashi dni. Desyat' dokladov pročitannyx v Kassele (1925), V.F., 1995, N1, (in Russian).
16. **England H.**, Social work as art, London, Allen & Unwin, 1986.
17. **Patricia L. Samson**, Practice wisdom: the art and science of social work, Journal of social work practice, vol. 29, 2015.